№ 72 ՇԱԲԱԹ ՄԱՐՏԻ 31 — 1901 — ՇԱԲԱԹ ՄԱՐՏԻ 31 № 72

ՔՍԱՆԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻՉՈՐ ԱՐՄԵՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերից).

Բայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Բայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

Զորեքշաբթի, ապրիլի 4-ին, Պետերբուրգում վախճանված կոլէժսկի սեկրետար

ՅԱԿՈԲ ԳԱՍՊԱՐԵԱՆ ՍԱՀԱԿԵԱՆՑԻ

ժահվան քառասնօրեակին կը կատարվեն պատարագ եւ հոգեհանգիստ հայոց ս. Նշան եկեղեցում, որի մասին հանգուցեալի վշտացեալ մայրը՝ Սոֆիա Ստեփանեան Սահակեանց եւ քոյրերը՝ Դարիա Գասպարեան Սահակեանց եւ Աննա Գասպարեան Քալանթար ցաւօք սրտի յայտնում են բարեկամներին եւ ծանօթներին, որոնք կը կամենան յարգել հանգուցեալի յիշատակը իրանց ներկայութեամբ։

Պատարագը կը սկսվի ժամի 11-ին, իսկ հոգեհանգիստը 12-ին։ 2—2

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Քրիստոս յարեաւ ի մեռելոց. Խաչի վրա. անբերրիութիւնից վընասվածների օգտին. Սրբազան Ամվրոսիի ճառը. Նամակ Ախալքալաքից. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր. —ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ. Մանրանկար. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Նոր հրատարակութիւններ Վենետիկում։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱՒ Ի ՄԵՌԵԼՈՑ

—

Քրիստոս յարեաւ... կասկած չի կայ.
Բնութիւնն համայն է մեզ վըկայ...
Բայց Երբ կասէ լեզուն հայոց—
Հայն էլ յարեաւ ի մեռելոց։

Դամատ-Քաթիպա

Քրիստոս յարեաւ ի մեռելոց...
Եկաւ գեղեցիկ Զատիկը։

Եկաւ նա եօթ շաբաթ պասից, ագից յետոյ, ինչպէս մութ, թանձր ամպերի տակից դուրս է գալիս յանկարծ արեգակը, դուրս է գալիս եւ ժպտում է. ժպտում է եւ ողջ բնութիւնը նրա հետ. ժպտում են երկինք, ժպտում է երկիրը, ժպտում են ծառեր, թուփեր եւ կանաչ արօտը... ժպտում է եւ մարդկային սիրտը... Բայց լսել էք, գիտէք, հէնց այն րօպէին, երբ ժըպտում է մարդկային սիրտը, դաշտերում եւ ձորերում հոտաւէտ մանուշակներ են ծաղկում, իսկ ծովերի խորքերում մարգարիտներ են ծնվում, մարգարիտներ, որոնք զարդարում են գոռող արքաների թագերը...

Եկաւ գեղեցիկ Զատիկը...

Մենք նստել ենք սեղաններիս շուրջը. մոմերը վառած, կարմիր ձուերը ձեռներիս, մենք ուրախ ենք եւ զուարթ եւ «Քրիստոս յարեաւը» իրար ասելիս եւ ջերմ համբուրվելիս, մենք կարծում ենք եւ մտածում ենք, թէ ամենքը այսօր երջանիկ եւ բաղդաւոր պիտի լինեն։

Սակայն կան շատ մարդիկ, որոնց համար չէ Քրիստոս յարեաւը...

Կան մարդիկ, որոնց տներում այսօր մոմեր չեն վառելու, կարմիր ձուեր չեն եփելու...

Կան մարդիկ, շատ մարդիկ, որոնց համար այսօրվայ քաղցը աւելի սաստիկ է, աւելի սուր կերպարանք է կրում, որովհետեւ նրանք գիտեն մեր ուրախութիւնը, տեսնում են մեր խնջոյքները...

Եւ որպէս զի մենք չամաչենք մեր ուրախութիւնից, յիշենք Զատկի օրը բոլոր լքեալներին, կարօտեալներին, որբերին...

Քրիստոսի յարութիւնից յետոյ աշակերտները որոնում էին նրան գերեզմանում եւ չէին գտնում. գերեզմանը խոր եւ խոնաւ էր, բայց դատարկ։

Ասում են, հէնց այն օրից Քրիստոսի բնակարանը... մեր սրտերը, այո, մեր սրտերն են դարձել...

Որոնեցէք նրան ձեր սրտերում եւ դուք կը գտնէք նրան, կը գտնէք, երբ լսելով ձեր խըղճի գեղեցիկ եւ մաքուր ձայնը, դուք կը յիշէք մեր տառապեալ, փոքր եղբայրներին։

Ամենահզօր բռնակալը ճնշում է նրանց։ Այդ բռնակալի անունը սով է։

Շատ շատերը չարաչար տանջվում են սովի ծանր լծի տակ, նրա սուր ճանկերում...

Հանեցէք ձեր գրպաններից մի մասը, մի չնչին մասը այդ խեղճերի համար։ Դուք կը զգաք թեթեւութիւն, դուք աղատ շունչ կը քաշէք եւ ձեր սրտերը կը ժպտան։ Բայց չէ՞ որ, եթէ ձեր սրտերը ժպտան, ուրախութիւն եւ բաղդը կը տիրեն ձեր տները, իսկ հեռու դաշտերում, ձորերում հոտաւէտ մանուշակներ կը ծաղկեն եւ ծովերի խորքերում մարգարիտներ կը ծնվեն, մարգարիտներ, որոնք զարդարում են գոռող արքաների թագերը...

—

«Քրիստոս յարեաւ ի մեռելոց». ափսոս, օտարամոլ կանայք փափկասունք. դուք, մեր մայրերը, քոյրերը, ամուսինները, որ մեզ շատ էք սիրում, յիշեցէք այսօր, որ այնքան հեռու մեզանից եւ այնքան մօտ մեր սրտերին տասնեակ հազար եղբայրակից որբիկներ կան, որոնք կարօտ են ձեր մայրական սիրուն, խնամքին, բարութեանը...

Տեսէք, գարունը չքեղ գալիս է, բիւրաւոր ծաղիկներով զարդարված եւ նախշուն թեւերի տակ ծածկած բերում է մեզ գեղեցիկ Զատիկը։ Իսկ որբիկները, վշտալի սուգը սրտերում, աղի արտասուքը աչքերին, դիմաւորում են անհաստատ քայլերով...

Որբիկների համար չէ Քրիստոս յարեաւը...

Աւաղ. նրանք եւս ունէին հայրեր, մայրեր. նրանք եւս փափուկ սէր էին վայելում։ Ուրախ, զուարթ, անուշ ժպիտները անմեղ երեսներին, նստած սեղանների շուրջը, մոմերը վառած, նրանք համբուրում էին եւ համբուրվում էին հայրիկների եւ մայրիկների հետ։ Ինչո՞ւ այժմ անցեալ երջանկութեան կարճ օրերի ծանր յիշատակը ամուր սեղմում է մանկական փոքր սրտերը եւ ինչո՞ւ այդ գեղեցիկ, ազնիւ եւ անմեղ աչերից անխնայ թափեցնում է արտասուքի ցոլուն կաթիլները։ Մօտեցէք, սրբեցէք այդ աչերը, հանելով մի մասը ձեր թանգ զարդերից. տուէք ձեր մատանին, ձեր ձեռնոցները։ Բայց... ոչ... Ինչո՞ւ զրկել ձեզ ուրախութիւնից, զրկել զարդերից։ Հագէք ձեր ձեռնոցները, բայց այդ ձեռնոցների գէթ արժէքը մի խնայէք, եթէ դուք իրաւ որ այսօր Քրիստոս էք որոնում եւ ուզում տեսնել...

—

Քրիստոս յարեաւ ի մեռելոց, աղաներ եւ հարուստ մեծատուններ։ Դուք միշտ գթառատ, ողորմած, բարեսիրտ էք դէպի ձեր զաւակները, որոնք հազարներ են վատնում ամեն տեսակ, երբեմն նոյն իսկ կեղտոտ հաճոյքներին բաւարարութիւն տալու համար։ Ձեր կանանց զարդերը եւ շորերը մի մի մեծ հարստութիւններ են։ Եւ անցնում են ձեր օրերը կերուխումի, զուարճութիւնների մէջ։ Կարծես օրօրոցից սկսած մինչեւ ձեր վերջին րոպէն՝ կեանքը մի անվերջ հարսանիք է ձեզ համար եւ այդ կոյր բաղդի ջերմ համբոյրներից արբեցած, անվրդով, անխռով, սառն եւ անտարբեր էք դուք նայում մեր ժողովրդի հազար ու մէկ վշտերի, ցաւերի ու հոգսերի վրա։ Ձեզ ինչ փոյթ մեր անվերջ արտունջները, գանգատները, մեր լացը, արտասուքը, երբ դուք բաւական էք, գոհ էք, ուրախ էք... Եւ քանի գնում է, կոչանում են, քարանում են ձեր սրտերը։ Դուք չէք լսում, կարծես խլացել էք, թէեւ արդէն քարերը խօսում են մեր աղէտների մասին, աղէտների, որոնք աւելի շատ են, քան թէ երկնքի փայլուն աստղերը եւ աւելի խոր, քան թէ ովկիանոսի անդունդները...

Բայց չէ՞ որ ձեր հարստութիւնը չէ կարող երկարացնել ձեր կեանքի թելերը եւ կանգնեցնել ձեր օրերը, որոնք անցնում են, գնում անդառնալի, մինը միւսի ետեւից, միշտ, անդադար, թողնելով ձեր սրտերում միայն կեանքի ունայնութեան եւ դատարկութեան զառնութիւնը...

Եւ ահա այսօր... գեղեցիկ օր է Զատկի...

Մի՞թէ նա եւս պիտի անցնէ, իբրեւ թշուառ ստուեր, ետքից թողնելով ունայնութիւն եւ միայն ունայնութիւն։ Եւ սակայն «Քրիստոս յարեաւ ի մեռելոց», աւետում է ձեզ եկեղեցին։ Եւ սակայն «Քրիստոս յարեաւ ի մեռելոց», «Քրիստոս յարեաւ ի մեռելոց» զօղանջում են եկեղեցիների զանգակները դեռ վաղ առաւօտից սկսած...

Քրիստոս...

Որոնեցէք ուրեմն այսօր մեր Քրիստոսը։

Իզուր է ձեր աշխատանքը, եթէ դուք կորոնէք Նրան ձեր չքեղ պալատներում, ձեր շռայլ խնճոյքներում։ Այդտեղ դուք կը գտնէք, ինչպէս Երուսաղէմում աշակերտները,—միայն գերեզման, խոր, խոնաւ, բայց դատարկ գերեզման։

Քրիստոս—կեանք է, իսկ կեանքը հեռու, շատ հեռու է գերեզմանից...

Աղքատ Բէթղէհէմում, աղքատ գերդաստանում, աղքատ ախոռի մսուրի մէջ ծնվեց Քրիստոս։ Նա իր կեանքը նուիրեց կարօտեալներին եւ մեր փրկութեանը համար եղաւ խաչ, փշեայ պսակը գլխին։

Բարձր Գողգոթայից նա այսօր դիմում է ձեզ, կոչում է եւ սպասում։

Շտապեցէք... Դեռ ունէք ժամանակ... Նա այնքան համբերող է...

Եւ եթէ այսօր դուք, աղաներ եւ հարուստ մեծատուններ, որ մինչեւ այժմ փախել էք բարի գործերից եւ միայն կեանքի հաճոյքներին, ունայնութեան էք ծառայել, յիշէք վերջապէս մեր ժողովուրդը, օգնէք նրան ձեր կարողութեանը չափով, դուք կը գտնէք, դուք կը տեսնէք Քրիստոսին։ Եւ ձեր սրտերը, աղատ բոլոր մեղքերի ծանր բեռից, ուրախ կը ժըպտան եւ ձեր սրտերի հետ կը ժպտայ ամբողջ բնութիւնը, դաշտերում եւ ձորերում հոտաւէտ մանուշակներ կը ծաղկեն, իսկ ծովերի խորքերում մարգարիտներ կը ծնվեն, մարգարիտներ, որոնք զարդարում են գոռող արքաների թագերը...

—

Ես այնչափ ջերմ ցանկանում եմ, որ այսօր ամենքս, ամենքս գտնենք մեր բարի Քրիստոսին եւ ես այնչափ խոր համոզված եմ, որ մենք կը գտնենք նրան, եթէ միայն որոնենք եւ ցանկանք նրան տեսնելու... Եւ ինչ...

Մի՞թէ ոչ ոք, ոչ ոք ձեզանից այսօր չէ պատասխանելու ինձ՝

«Օրհնեալ է յարութիւն Քրիստոսի»։

Ոչ ոք։

Ուրեմն...

Քրիստոս յարեաւ ի մեռելոց եւ դու, խեղճ, խեղճ ժողովուրդ...

Բայց Երբ կասէ լեզուն հայոց—
Հայն էլ յարեաւ ի մեռելոց։

Գր. Զալխուշեան

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՎԵՆԵՏԻԿՈՒՄ

—

Ունենք մի քանի հատ գրական կենտրոններ։ Բայց ինչ են նրանք ներկայացնում այժմ։

Կ. Պոլիսը, ինչպէս երեւում է, դատապարտված է կատարեալ մեռելութեան։ Ամբողջ անցեալ տարին մենք ստացանք Կ. Պոլսից միայն մի հատ գիրք—«Ընդարձակ Օրացոյց Ազգային Հիւանդանոցի»։ Մի բաւական հատ գիրք է դա, հարուստ բովանդակութեամբ, պատկերազարդ։ Բայց եւ այդպէս, դա մի օրացոյց է միայն։ Թէ որքան մեծ է գրական անանկութիւնը Բոսֆորի ափերում, երեւում է հէնց նրանից, որ այդ օրացոյցը ամբողջ ամիսներ Կ. Պոլսի հայ լրագրութեան մէջ հիացմունք եւ փառաբանութիւն էր բարձրացրել։

Այսքան խեղճ է Թիւրքահայերի մտաւոր կենտրոնը։ Ռուսահայերի մտաւոր կենտրոն Թիֆլիսը աւելի նախանձելի դրութեան մէջ չէ։ Անցեալ տարի մեղանում լոյս տեսան մեծ մասամբ փոքրիկ, աննշան գրքոյկներ, եթէ չը հաշուենք Հրատարակչական ընկերութեան մի քանի հրատարակութիւնները։

Մնում են մեր հին գրական կենտրոնները—Մխիթարեան վանքերը Վենետիկում եւ Վիէննայում։ Բայց Վիէննան չափազանց նեղ մասնագէտ է, չափազանց շատ է խրված գրական այնպիսի հարցերի մէջ, որոնք չեն գրաւել եւ չեն կարող գրաւել ընթերցողների փոքր ի շատէ լայն շրջան։ Բայցի դրանից, Վիէննան նոյն իսկ իր ընտրած ճիւղի մէջ վերջին տարիներս այնքան աղքատացել է, որ նրա գործունէութիւնը սկսել է համարեա աննկատելի դառնալ։

Եւ եթէ մենք պիտի որոնենք մի անկիւն, ուր դեռ կենդանի է գրական եռանդը, մեր հայեացքը պիտի ուղղենք դարձեալ դէպի ս. Ղազարի վանքը, ուր այնքան մեծ գործեր են կատարվել եւ ուր, ինչպէս երեւում է, չէ մեռնում աշխատասիրութիւնը։ Վերջին ժամանակներս Վենետիկում լոյս տեսան գրքեր, որոնք արժանի են մեր ուշադրութեան։ Մենք շատ ցաւում ենք, որ Վենետիկի միաբանութիւնը չէ ուղարկում մեզ իր բոլոր հրատարակութիւնները, որպէս զի կարողանանք նրանց մասին լիուլի տեղեկութիւններ հաղորդել մեր ընթերցողներին։ Մեր հիմնաւոր եւ ամենաշնասակար պակասութիւններից մէկն էլ այն է, որ մեր գրական կենտրոնները հեռու են միմեանցից, խորթ, անծանօթ են իրար, եւ մի այնպիսի հասարակ բան, ինչպէս է հրատարակութիւնների փոխանակութիւնը, մեզանում դեռ եւս գոյութիւն չունի։ Իզուր չէ հայերի մասին ասված, թէ նրանք անմիաբան ազգ են...

Թողնելով որ ժամանակը զարգացնէ մեզանում աւելի մեծ բարեիղձութիւն, ընդհանուր շահերի աւելի լաւ ըմբռնում, մենք առ այժմ կը խօսենք Վենետիկի մի քանի հրատարակութիւնների մասին, որոնք մեր ձեռքն են հասել։

I

Հայապատում

Ինչպէս յայտնի է, Վենետիկի Մխիթարեանները այս տարի սեպտեմբերին պիտի տօնեն իրանց միաբանութեան հիմնարկութեան երկհարիւրամեակը։ Այդ առիթով Վենետիկի տպարանը մի քանի հրատարակութիւններ պիտի տայ, որոնց մէջ նշանաւորը «Հայապատումն» է, Հ. Ալիշանի մի նոր մեծ գործը։

Ներկայումս այդ գիրքը դեռ տպագրվում է. բայց Վենետիկից մեզ ուղարկված են երկու թերթ (16 երես) այդ աշխատութիւնից եւ մենք կարող ենք մի քանի տեղեկութիւններ հաղորդել նրա մասին։

Ցայտարարութիւնից մենք ենթադրում էինք թէ «Հայապատումը» կը լինի բոլոր հայ պատմագիրների ժողովածուն մի գրքի մէջ։ Այսպիսի մի ժողովածուի անհրաժեշտութիւնը ինքն ըստ ինքեան հասկանալի է։ Մեր հին մատենագիրները հրատարակվել են զանազան ժամանակներում եւ զանազան տեղեր, առանց մի ընդհանուր սիստեմի։ Շատերը այդ մատենագիրներից այժմ այնքան հազուագիւտ են, որ ոչ մի տեղ ձեռք բերել չէ կարելի։ Օրինակ, Շահնազարեան վարդապետի, Էմինի հրատարակած Ստեփանոս Օրբէլեանը, Մովսէս Կաղանկատուացին, Թովմաս Մեծոփեցին եւ այլն։ Այս էլ, ի հարկէ, մեր յետամնացութեան խոշոր նշաններից մէկն է։ Մեղանում հայոց մատենագրութեամբ զբաղվողներ կան, բայց հայ մատենագիրների մի ամբողջ ժողովածու կազ-

ԽԱՉԻ ՎՐԱ

Հրէաստանը ներկայացնում էր բարքերի անկումն, խղճի բացակայութիւն, մտքի բրոնաբարումն... Արդարութիւնը ոտքի տակ էր գնացել, հաւասարութիւնը ջնջվել, ճնշումը, հալածանքն ու կողոպուտը ընդհանուր դարձել։ Այսպիսի պայմանների մէջ յուսահատ ժողովուրդը, աչքերը գցած երկնքին՝ բոպէ առ բոպէ սպասում էր այնտեղից փրկութեան ձայնին։

Այդ ժամանակ ծնվեց Բեթղեհէմի մանուկը։

Նա թափառեց Հրէաստանի զանազան կողմերը, անձամբ տեսաւ այն քաօսը, որի մէջ տառապում էր ժողովրդի մասսան։ Նա ականատես եղաւ բաղմաթիւ չարիքների, ծայրայեղ թշուառութեան, քաղցի ու ծարաւի։ Նա տեսաւ, թէ ինչպէս ուժեղը ճնշում էր թոյլին, հարուստը աղքատին, իշխանաւորը ստորադրեալին, թէ ինչպէս Հրէաստանի մի ծայրից մինչեւ միւս ծայրը թագաւորում է անհաւասարութիւնն ու անարդարութիւնը...

Եւ նա իմացաւ, որ այդ ազգը դժբաղդ է այն պատճառով, որ սիրել չը գիտէ։

Նա քարոզեց սէր, եղբայրութիւն...

Նա լուռ մօտեցաւ իր դատաւորներին, լռութեամբ լսեց իր մահվան դատավճիռը եւ անմեղ ժպիտը շրթունքներին բարձրացաւ խաչ, վերջին անդամ արտասանելով խաչի վրայից՝ «Սիրեցէք միմեանց»։

Վճիռը կատարվեց, անարգական խաչը ներկվեց անմեղ արիւնով եւ Գողգոթայի վրա թափված արիւնը ծաւալվելով, ծաւալվելով հեղեղեց Հրէաստանը, հեղեղեց նաեւ աշխարհը եւ մենք այդ խաչը ստուածացրինք ու պաշտեցինք։

Աստուածային գաղափարները մարմնացան խաչի վրա, խաչը յաղթանակեց, բայց դրա հետ անմահացաւ նաեւ մի տիպ։ այդ կեղծաւոր փարիսեցու տիպն էր իր զզուելի յատկութիւններով, իր երեսուն արծաթով։

Եւ ահա այսօր մենք տօնում ենք մեզ համար նուիրական այդ օրն—խաչի յաղթանակը։ Տօնական հագուստներով շտապում ենք եկեղեցի, սեղանը զարդարում հազարաւոր մոմերի բոցիկներով, գանձանակը ծանրացնում մեր աջահամբոյրներով, բայց թէ այդ բոլորը որչափով է համապատասխանում մեր ներքին աշխարհին, մեր անկեղծ հաւատին դէպի խաչի գաղափարը, այդ հարցը վաղուց արդէն մոռացված է մեր եսական եւ փարիսեցի դարում։

Արդեօք մենք աւելի վատթար չենք, քան այն փարիսեցին, որը տաճար էր մտնում կուրծքը ծեծելով, երեսը քարերին քսելով, լաց ու աղաղակ բարձրացնելով. երբ յանուն նուիրական գաղափարների զատկական ճոխ սեղանի շուրջը բոլորած եւ մեր որդկերանցով ուրախ ու զուարթ անուշ ենք անում թաթխման ընթրիքը այն բոպէին, երբ մեր պատին կից արեւի լոյսից զուրկ նկուղում դառն աղքատութեան մէջ, դառն արցունքներով կերակրում է իր որբերին այրի կինը, երբ մահվան անկողնում քաղցած երեխաների անօգնական հայրը իր հաշիւն է վերջացնում այս անսիրտ աշխարհի հետ, երբ հալածական կինը, կարօտ մխիթարիչ մի խօսքի, իր հասակն առած դստեր հետ արից ընկած իր տղամարդուն եւ իր աւերված վաթանն է ողբում. իսկ մենք այս բոլորը տեսնում ու լսում, բայց խուլ ու համր ենք ձեւանում։

Արդեօք մենք աւելի վատթար չենք, քան Յիսուսին երեսուն արծաթով վաճառողը, երբ անսուրբ շրթունքները մօտեցնելով հաւատարութեան եւ սիրոյ սկզբունքները նուիրագործող խաչին մենք անտարբեր ու անսիրտ ենք դէպի մեզ շրջապատող թշուառութեան ծովը եւ մեր ականջին հասնող հազարաւոր քաղցածների աղաղակը։

Այսպէս չէ՞ արդեօք...

Յովհ. Տէր-Մարտիրոսեանց

Երեւան.

ԱՆԲԵՐԻՐԻՈՒԹԻՒՆԻՑ ՎՆԱՍՎԱԾՆԵՐԻ ՕԳՏԻՆ

Ստացանք հետեւեալ նոր նուիրատուութիւնները.

Թիֆլիս՝ Մի տիկնոջից, որ իր անունը չէ ցանկանում յայտնել, 28 բուբլի եւ նրա մօտ եղած հիւրերից 22 բուբլի։ Զարուհի Սաղաթելեանից 5 բուբլի։

Բագու՝ Մի պարոնից, որ իր անունը չէ ցանկանում յայտնել, 50 բ., Ա. Արուժեանից 5 բուբլի։

Բինագադի նաւթահանքերի ծառայողներից 36 բուբլի, որ նուիրել են՝ Մ. Պրէօ 2 բ., Մ. Բաբայեանց 5 բ., Տ. Մ. Շահնազարեանց 3 բ., «Արայ» նաւթահանքից 15 բ., Յ. Իւսուփեանից 3 բ., օր. Է. Իւսուֆեանից 2 բ. եւ Ս. Իւզբաշեանից 6 բուբլի։

Բալախանի Տիկին Գ. Յովնաթանեանի միջոցով 12 բուբլի 50 կոպէկ, որ ժողովված է հանգանակութեամբ հետեւեալ տիկինների մէջ. տիկիններ Մ. Յովնաթանեան եւ Փ. Աւագեան երկու երկու բուբլի, տիկիններ Գ. Յովնաթանեան, Ռ. Թադէոսեան, Մ. Փանոսեան, Վ. Ահարոնեան, Յ. Խօջամիրեանց, Թ. Ղահրամանեանց, Հ. Գրիգորեան եւ Մ. Մկրտչեան մի-մի բուբլի, Ա. Բարխուդարեան 50 կոպէկ։

Ալէքսանդրօպոլ՝ Տ. Մաքրուհի Ջալալեանից 1 բուբլի։

Խարկովի Նահանգի Սենկօվօ աւանից Ե. 2 բուբլի։

Ընդամենը 161 բուբլի 50 կոպէկ, որ նախկին 2400 բուբլի 14 կոպէկի հետ միասին կանէ 2661 բուբլի 64 կոպէկ։

ՍՐԲԱԶԱՆ ԱՄՎՐՕՍԻԻ ՃԱՌԸ

Մայրաքաղաքի լրագիրները պարունակում են տեղեկութիւններ այն գրութիւնների մասին, որոնք վերաբերում են կոմս Լեւ Տօլստոյին։

«Харьк. Губ. Вѣд.» լրագրի № 1008-ում տպված է Խարկովի արքեպիսկոպոս Ամվրոսիի ճառը, որ նա արտասանել է Խարկովի հոգեւոր սեմինարիայում մարտի 18-ին։ Սրբազանը իր ճառի մէջ յիշեց ի միջի այլոց «այն լուսաւորված մարդկանց, որոնք, անունով քրիստոնեայ մնալով, գործով եկեղեցու ամենավտանգաւոր թշնամիներն են։ Նրանց մէջ առաջին տեղը,—նկատեց հռետորը,—պատկանում է կոմս Լեւ Տօլստոյին։ Կոմս Լեւ Տօլստոյի մոլորութիւնների լիակատար նկարագրութեանը, որ պարունակվում է սինոդի թղթի մէջ, սրբազան Ամվրոսի աւելացրեց հետեւեալ նկատողութիւնները Տօլստոյի անձնաւորութեան եւ այն միջոցների մասին, որ նա գործ է ածում իր գրուածքներում իր սուտ վարդապետութիւնը տարածելու համար։

«Նախ։ Հաւատի եւ եկեղեցու վրա Տօլստոյի թշնամական յարձակումները նշանաւոր կերպով տարբերվում են ուրիշ սուտ վարդապետութիւնների յարձակումներից նրանով, որ նա չէ աշխատում, ինչպէս ուրիշները, գործել միայն հերքելով՝ քրիստոնեաների հոգիների մէջ հաւատը գիտութեամբ փոխարինելու նպատակով եւ այլն, այլ մօտենում է նրանց Յիսուս Քրիստոսի եւ Աւետարանի անունով։ Օրինակ, հասարակ ժողովրդի հաւատարակած իր ֆանտատիկական առակների վրա նա բնաբաններ է դնում Ս. Գրքից եւ նրանց մէջ հիւսում իր կեղծ մտքերը ժողովրդական հաւատալիքների հետ։

Երկրորդ։ Ցանդգնելով աղաւաղել եւ վերափոխել աւետարանը, նա հնարաւոր համարեց փոխարինել Քրիստոսի պատուիրաններից մէկը եւ, ստութիւն դարձնելով այդ պատուիրանը, տարածեց ամբողջ աշխարհում այդ սուտը այն նպատակով, որ կարողանայ խաբել ամենքին այդ փոխարինութեան խորամանկութեամբ եւ նրա դժուար հասկանալիութեամբ։ Մեր խօսքը չարին չընդդիմանալու պատուիրանի մասին է։

Տեսնենք այժմ, թէ ինչպէս է այդ սատանայական խորամանկութեամբ յօրինված պատուիրանը յարմարվում մեր դարի բոլոր մոլորութիւններին, դառնալով նրանց համար հիմք եւ արդարացումն։ Այդ պատուիրանի իմաստով, քրիստոնեան, որ հասկանում է չարը Քրիստոսի օրէնքի համաձայն, կամ նոյն իսկ հեթանոսը, որ հասկանում է չարը իր բնական խղճով, չը պէտք է հակառակի չարին։ Եթէ նա իմանայ, որ դաւ է նիւթվում թագաւորի կեանքի դէմ, նա չը պէտք է հակառակի այդ բանին,—այդ կը նշանակէ ազատել աշխարհը բռնակալութիւններից (անիշխանականութիւն). եթէ նա իմանայ գործադուլների մասին, հարուստ մարդկանց կողոպտվելու մասին,—չը պէտք է խանգարէ այդ բանը, որովհետեւ այդ արդար ապատամբութիւն է դրամատէրերի դէմ, որոնք խլել եւ իւրացրել են այն գոյքը, որի վրա աղքատները նոյնքան իրաւունք ունեն, որքան եւ հարուստները (սոցիալիզմ)։ Եթէ նրա կնոջը յափշտակում են կամ կրթութեամբ անառակացնում են նրա զաւակներին, կամ նրա ընտանիքի ներկայութեամբ սրբապղծ խօսքեր են արտասանում կամ գործեր կատարում, նա չը պէտք է այդ բանին հակառակի, որովհետեւ ամեն մարդ ազատ իրաւունք ունի իր համոզմունքներն ունենալ եւ նրանց համաձայն գործել (ազատամտութիւն, խղճի ազատութիւն)։ Եթէ նրա աչքի առջեւ երիտասարդ մարդիկ ապատամբվում են եւ անկարգութիւններ են անում, նա չը պէտք է նրանց խանգարէ, որովհետեւ երիտասարդ սերունդներն են լինելու ապագայում գիտութիւնը առաջ մղողները եւ հասարակական կեանքի կարգերը հաստատողները (առաջադիմութիւն)։ Եթէ նրա համար զզուելի են որ եւ է նոր սովորութիւններ, եթէ նրան անբարոյական են թւում որ եւ է ներկայացումներ եւ հասարակական զուարճութիւններ կամ թէ այլանդակ են թւում որ եւ է մօդային բաներ, նա չը պէտք է յարձակվի նրանց վրա,—այդ մի քայլ է դէպի բարւոքումն հասարակական կեանքի, որ զարգանում է անհրաժեշտ ատիճանականութեամբ սխալներից դէպի բարւոքումները (քաղաքակրթութիւն)։ Ահա թէ ինչու այնքան տարածված է եւ այնքան սիրելի է ժամանակակից սուտ վարդապետների սրտին կոմս Տօլստոյի նոր պատուիրանը։

Երրորդ։ Կոմս Տօլստոյ ոչ միայն իր գրուածքներով է տարածում իր մոլորութիւնները իր մենակեցութեան տեղից, Եասնայա Պոլեանայից, այլ եւ գործով։ Նա, իր երկիւղած երկրպագուների թւում, ունի ջերմ աշխատակիցներ իր յանցաւոր գործունէութեան մէջ։ Այդպէս են իշխան Խիլկով, Բոգդանովիչ, Չերտկով, Աբրիկոսով, Տրեգուբով, որոնք արդէն յայտնի են գրականութեան մէջ, եւ ուրիշները, որոնք գաղտնի գործում են ժողովրդի մէջ։ Այդ գործիչները հիմնում են սոցիալիստական ընկերութիւններ եւ գաղութներ։ Այդպէս, իշխան Խիլկով Խարկովի նահանգի, Սուժանկիյ գաւառի, Պալովկա գիւղում, ընծայել է գիւղացիներին 400 օրավար իր սեփական հողից, չինել է նրանց համար 40 տուն եւ բնակեցրել է նրանց մէջ իր հետեւողների ընտանիքները։ Կոմս Տօլստոյի աշխատակիցները գայթակղեցրին, ինչպէս յայտնի է, աւելի քան եօթ հազար ընտանիք կովկասաբնակ դուխոբորներից եւ նրանցից օրինակելի սոցիալիստական գիւղ կազմելու համար՝ տեղափոխեցին նրանց Կանադա, ուր նրանք կոտորվում են ցրտից ու քաղցից։ Եւ որ ամենից աչքի ընկնողն է, նոյն իսկ կոմսի սեփական աղջիկը, Տատեանա Լվովնան, ինչպէս մեզ յայտնի է, մի քանի անդամ եկել է Պալովկա գաղութը, այցելելու իր տօլստոյականներին եւ քաջալերելու այնտեղի չտունդիստներին։ Իսկ որքան գաղտնի տօլստոյական քարոզիչներ կան ցրված ժողովրդի մէջ։ Մեր հայրենիքի պատմութեան մէջ, երբ նկարագրելու լինեն մեր տխրալի շրջանը, մեր ժամանակ տիրող վնասակար վարդապետութիւնների թւում անշուշտ կը յիշվի, իբր զանազան աղանդներից մէկը, նաեւ հռչակաւոր տօլստոյականութիւնը։

Չորրորդ։ Կոմս Տօլստոյի անձնական ձիրքերը եւ գրականական փառքը անչափ նպաստում են նրա յարգողների եւ հետեւողների թիւի աւելանալուն։ Ասում են. «Հրաշալի տաղանդ է։ Հանճարեղ գրող է»։ Սակայն մարդ զարմացած է մնում, թէ որքան թեթեւամիտ է եւ կուրօրէն է դատում մեր կրթված հասարակութիւնը, որ այդպէս պատկառանքով խոնարհվում է կոմս Տօլստոյի առաջ։ Այդ հասարակութիւնը չէ հասկանում, որ տաղանդը չափվում է ոչ միայն իր ոյժով եւ փայլով, այլ ամենից աւելի իր ուղղութեամբ։ Սուր դանակը հաց է կտրում եւ ուրիշ զանազան ուտելիքներ, բայց նոյն դանակը աւազակի ձեռքում սպանութեան գործիք է դառնում։ Աստուծու ընկած արարածներից ամենատաղանդաւորը սատանան է, որ երկնքից գահավիժվելուց յետոյ էլ որոշ չափով պահպանել է՝ անկումից առաջ երկնային բարձունքում ունեցած ընդունակութիւնները, բայց Աստուածային Յայտնութիւնը ոչ ոքից այն ատիճան չէ նախազգուշացնում մեզ, որքան սատանայից, անուանելով նրան նենգաւոր, փորձիչ եւ Աստուծու եւ մարդկային ամբողջ ցեղի անհաշտ թշնամի։ Ի հարկէ, նոյնպիսի զգուշութիւն է պահանջվում եւ սատանայի արբանեակների վերաբերմամբ։ Բայց ժամանակակից աշխարհիկ մարդիկ, որոնք չը գիտեն քրիստոնէական վարդապետութիւնը, ձգտում են դէպի այդպիսի տաղանդներ, ինչպէս մժեղները դէպի բոցը։ Միւս կողմից, չը կայ եւ երբէք չէ եղել մարդկային ցեղի մէջ մի այնպիսի հանճար, որ հասարակութեան մէջ ասում է. «Պապ՝ Ս. Ներսիսի սպանման եւ իր անշնորհք վարուց համար՝ չէր վայլեր թագաւորելու»։ Մինչդեռ եթէ Բուզանդի պատմութեան դիմաց դրված լինէր յոյն Ամմիանոսի պատմութիւնը, այն ժամանակ դուրս կը գար, որ Պապը այնքան էլ դէն գցելու թագաւոր չէր։

Կուչ գալով մեր ազգային աւանդութիւնների եւ աղբիւրների մէջ, մենք երբէք չենք կարող մեր պատմութիւնը կազմել այնպէս, ինչպէս ցանկալի է։ Պէտք է անպատճառ մեր հին պատմագիրների տուած տեղեկութիւնների մէջ մտցնել եւ օտար պատմագիրների տեղեկութիւնները։ Այս ուղղութեամբ մինչեւ այժմ մեզանում շատ քիչ բան է արված։ Հ. Ալիշան, որ այնքան ընդարձակ տեղեկութիւններ ունի Հայաստանին վերաբերված օտար աղբիւրների մասին, կարող էր լրացնել մեր յիշած մեծ պակասութիւնը։ Դա իսկապէս կը լինէր ծերունի նահապետի անուան արժանի մի մեծագործութիւն եւ «Հայապատումը» կը դառնար մի գիրք, առանց որի ոչ մի հայ պատմաբան եւ բանասէր չէր կարող, ինչպէս ասում են, քայլ փոխել։

Գիրքը կը լինի մի ստուար հատոր, «Այրարատի» կամ «Սիսուանի» նման, գեղեցիկ տպագրութիւն, ազնիւ թղթի վրա. 17 թերթը (129-րորդ երեսը) դեռ չորրորդ դարն է պարունակում (370 թւականը). սա արդէն բաւական է գրքի ծաւալի մասին հակացողութիւն կազմելու համար։ Հ. Ալիշան համարեա իւրաքանչիւր երեսի վրա ունի աշխարհաբար լեզուով գրված մեծ ու փոքր ծանօթութիւններ, որոնք թէ բացատրում են ընագրի դժուար հասկանալի բառերը, եւ աշխարհագրական դիրքերը, եւ թէ տեղեկութիւններ են հաղորդում գործող անձինքների մասին։ Չը մոռանանք յիշել եւ այն, որ գրքում կան եւ պատկերներ, եւ դրանցից մի քանիսները հին քանդակների պատճէններ են։

Այս բոլորից յետոյ ինչպէս պէտք է նայել հայր Ալիշանի այս նոր գործի վրա։

Դա, ամենից առաջ, մի մեծ գործ է. «Այրարատի» բազմարդիւն հեղինակը այստեղ էլ ցոյց է տուել իր հակայական աշխատասիրութիւնը։ «Հայապատումը» մի պատմական յիշատակարան է։ Բայց անկեղծութեամբ եւ անկողմնապահութեամբ դատելով, մենք չենք կարող մեր մի քանի նկատողութիւնները չը դնել այստեղ։

«Հայապատումը» կարող ենք համարել հայոց պատմութիւն, կազմված անմիջապէս բուն աղբիւրներից։ Բայց այդ պատմութիւնը կցկտուր է, չունի եւ չէ կարող ունենալ մի ընդհանուր ոգի, ուղղութիւն։ Իբրեւ պատմութիւն, նա չէ կարող լինել ժողովրդական գիրք քանի որ գրաբար է. եթէ հ. Ալիշան թարգմանած լինէր այդ ժողովածուն աշխարհաբարի, մենք կունենայինք մի շատ թանգագին պատմական գիրք։ Իր ներկայ դրութեան մէջ «Հայապատումը» կարող է, մի յայտնի չափով, նպաստել հայոց պատմութիւն գրողին։ Ասում ենք «մի յայտնի չափով», որովհետեւ եթէ համեմատենք «Հայապատումը», օրինակի համար, Զամչեանի հետ, կը տեսնենք, որ վերջինս աւելի առատ ու բազմակողմանի աղբիւր է, որովհետեւ հիմնված չէ միայն հայոց պատմագիրների վրա, այլ աչքի առաջ ունեցել է եւ օտար աղբիւրներ։ Մեր կարծիքով «Հայապատումը» կունենար շատ մեծ նշանակութիւն, եթէ պարունակէր իր մէջ եւ օտար աղբիւրներ։ Օրինակի համար, Պապ թագաւորի սպանութեան պատմութիւնը հ. Ալիշան վերցնում է Բուզանդից. բաւական չը համարելով այն անարգանքները, որ Փաւստոս թափել է այդ խեղճ թագաւորի վրա, հ. Ալիշան ծանօթութեան մէջ ասում է. «Պապ՝ Ս. Ներսիսի սպանման եւ իր անշնորհք վարուց համար՝ չէր վայլեր թագաւորելու»։ Մինչդեռ եթէ Բուզանդի պատմութեան դիմաց դրված լինէր յոյն Ամմիանոսի պատմութիւնը, այն ժամանակ դուրս կը գար, որ Պապը այնքան էլ դէն գցելու թագաւոր չէր։

Կուչ գալով մեր ազգային աւանդութիւնների եւ աղբիւրների մէջ, մենք երբէք չենք կարող մեր պատմութիւնը կազմել այնպէս, ինչպէս ցանկալի է։ Պէտք է անպատճառ մեր հին պատմագիրների տուած տեղեկութիւնների մէջ մտցնել եւ օտար պատմագիրների տեղեկութիւնները։ Այս ուղղութեամբ մինչեւ այժմ մեզանում շատ քիչ բան է արված։ Հ. Ալիշան, որ այնքան ընդարձակ տեղեկութիւններ ունի Հայաստանին վերաբերված օտար աղբիւրների մասին, կարող էր լրացնել մեր յիշած մեծ պակասութիւնը։ Դա իսկապէս կը լինէր ծերունի նահապետի անուան արժանի մի մեծագործութիւն եւ «Հայապատումը» կը դառնար մի գիրք, առանց որի ոչ մի հայ պատմաբան եւ բանասէր չէր կարող, ինչպէս ասում են, քայլ փոխել։

Լ.

ւասարաչափ զօրեղ լինէր մարդկային գործունէութեան բոլոր ասպարէզներում։ Հանճարեղ երաժշտագէտը չէ կարող մեծ փիլիսոփայ լինել, ինչպէս նաեւ հրապուրիչ բանաստեղծը եւ վիպասանը չունի ոչ ընդունակութիւններ, ոչ պատրաստականութիւն, որպէս զի մեծ աստուածաբան եւ հաւատի ուսուցիչ դառնայ։

Բայց մեր հայրենիքում սուտ վարդապետութիւններ են տարածում եւ արատների թիւը աւելացնում ոչ միայն տգէտ տգիտականները, այլ եւ բազմաթիւ ուրիշ գործիչներ։ Ովքեր են դրանք եւ ո՞րտեղ են գտնվում։ Աւելի լաւ է հարցնէք, թէ ո՞րտեղ չը կան այժմ նրանցից։ Նրանք գտնվում են պետական եւ հասարակական սանդուղքի բոլոր աստիճանների վրա՝ վերեւից սկսած մինչեւ ներքեւ։ Նրանցից կան եւ բարձր շրջաններում. այդ երեւում է այն լռելեայն տրվող ազատութիւնից, որ վայելում են այժմ եկեղեցու եւ մեր հայրենիքի իսկական բարիքի թշնամիները։ Այդ երեւում է եւ այն գաղտնի հովանաւորութիւնից, որ ցոյց է տրվում հնադաւաններին եւ ամեն տեսակ աղանդաւորներին, որոնց միջոցով յոյս ունեն վնաս հասցնել ուղղափառ եկեղեցուն, որ այնքան ատելի է ազատամիտների եւ մատերիալիստների սրտին։ Նրանցից կան անկասկած եւ մեր դպրոցներում,—այլապէս այդ դպրոցներից դուրս չէին գալ այնպիսի պատանիներ, որոնք համարձակվում են ակներեւ կերպով ապստամբվել իշխանութեան եւ հասարակական կարգերի դէմ։ Նրանցից կան, ինչպէս տեսնում ենք, նաեւ մեր դատարաններում, որոնք արդարացնում են նոյն իսկ այնպիսի ակնյայտնի յանցաւորներին, որոնք իրանք խոստովանում են, որ իրանք են գործել յանցանքը։ Նրանցից կան նաեւ զեմստվոների եւ դումաների ժողովներում, ուր թոյլատրվում են պարլամէնտական ձեւեր ու կազմվում ազատամիտ ծրագիրներ եւ ուր այնքան դըժուարութեամբ են անցկենում եկեղեցական գործերը եւ ժողովրդի բարոյական կարիքներին վերաբերեալ խնդիրքները, մինչդեռ այնքան պատրաստականութիւն է ցոյց տրվում ժողովրդական թատրոններ եւ ուրիշ հասարակական զուարճութիւններ կազմակերպելու գործում։ Նրանցից կան եւ գիւղական վոլոստներում, ուր մեծ խնամքով թագցնում են այն աղանդաւոր քարոզիչներին, որոնց փնտռում է իշխանութիւնը։ Ի՞նչ ասենք մեր, այսպէս կոչված, թեթեւ գրականութեան մասին, որ այնքան ջերմ եռանդով տարածում են ժողովրդի մէջ։ Այդ մի միջոց է ժողովրդի մէջ մտցնելու թեթեւամիտ եւ անշնորհք գրուածքներ, որոնք փչացնում են ժողովրդի ճաշակը եւ սառեցնում նրան հոգեւոր եւ լուրջ գրքերի ընթերցանութիւնից։ Իսկ ի՞նչ է ներկայացնում մեր կրթված հասարակութիւնը, որ այնքան սիրում է ազատ ու անձնավստահ կերպով դատել բոլոր հարցերի եւ ժամանակակից դէպքերի ու երեւոյթների մասին։ Այդ մի չուկա է, ուր փոխանակվում են եւ առաջարկվում ամեն տեսակ էժանագին ազատամիտ գաղափարներ եւ դատողութիւններ։

Ի հարկէ, այս ասածներիս պատճառով իմ գլխին կը թափեն ամենախիստ կշտամբանքներ եւ մեղադրանքներ, թէ ես վիրաւորանք եմ հասցնում մեր հասարակութեան բոլոր բարձր եւ կրթված դասակարգերին։ Բայց չէ՞ որ պէտք է գտնվի մէկը, որ բանայ անհոգ ու կուրացած մարդկանց աչքը, որոնք դէպի կորուստ են դիմում, տանելով իրանց յետեւից մի ամբողջ մեծ ժողովուրդ։ Ես ծեր եմ,—ութսուն տարեկանից մեծ եմ, արդէն հինգերորդ թագաւորութիւնն է, որ տեսնում եմ իմ աչքով, եւ մեղք կը համարէի մեռնել, առանց դառն ճշմարտութիւնը ասելու իմ հայրենիքին։ Ես իմ աչքով տեսել եմ անցեալ դարի բոլոր, թէ աջողակ թէ անաջող, ըէֆորմները լուսաւորութեան գործերում եւ պետական ու հասարակական հիմնարկութիւնների մէջ. տեսել եմ մեր ժողովրդի բարքերի մէջ կատարվող արագ փոփոխութիւնը եւ զարմացել, թէ ինչպէս է, որ մեր մտածող մարդիկ չեն նկատում, որ մեր ժողովուրդը ընկել է այն մտաւոր եւ բարոյական հաստատ բարձրութիւնից, ուր գտնվում էին մեր նախնիքը,—չեն նկատում, թէ ինչպէս յափշտակութեան են ենթարկվում մեր հոգեկան ոյժերը, ինչպէս անհետանում է մեր ընտանեկան կեանքի մաքրութիւնն ու բարեկազմութիւնը եւ մեր սովորութիւնների պարզութիւնն ու հավատութիւնը։ Թող ինձ վրա յարձակվեն իմ հավարձակ եւ խիստ խոսքերի համար։ Իմ ասածները արդարացումն են գտնում ժամանակակից դէպքերի եւ անվիճելի փաստերի մէջ։»

ՆԱՄԱԿ ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ

—

Մարտի 16-ին

Շարունակում ենք մեր խօսքը մեր քաղաքային գործերի մասին։

Ինչ արին կամ ինչ են անում մեր քաղաքի ընտրողները եւ ընտրվողները՝ մեր նախորդ նամակում նկարագրած ողբալի դրութիւնից քաղաքը դուրս բերելու համար։ Ահա թէ ինչ։

Մեր քաղաքի մօտ 300 ընտրողներից՝ անցեալ 1900 թւի օգոստոսին տեղի ունեցած քաղաքային ընտրութիւնների ժամանակ՝ մի խումբ ընտրողներ, ընդամենը 28 հոգի միայն, ներկայացան ընտրողական ժողովին եւ իրանք իրանց ընտրվեցին եւ ընտրեցին նոր քաղաքային լիազօրներ, հին կազմից թողնելով միայն երկու հոգու։ Դրանից երեւում է, որ այդ մի խումբ մարդիկ շատ դժգոհ էին անցեալ կազմից. սակայն ո՞ւմ ընտրեցին անցեալ անբաւարար կազմի փոխարէն. եռանդոտ, հասարակական գործերում արդէն փորձված, հասարակութեանը շատից-քչից յայտնի ինտելիգէնտ կամ գոնէ կիսաինտելիգէնտ անձնաւորութիւններ արդեօք։ Ո՛չ։ Ուրեմն պատահական մարդկանց։ Նոյնպէս ո՛չ. այլ, գլխաւորապէս, իրանց ազգականներին եւ բարեկամներին։ Այստեղի մեր Ֆամուսովները չեն մոռանում իրանց նախատիպի «Ну какъ не порадѣть родному человѣку!» պատգամը։ Աւելորդ չեմ համարում պարզել, որ մեր այդ փոքրիկ Ֆամուսովները ուրիշ տեսակի Ֆամուսովներ են—ժամասէր, աղօթասէր, ժամագիրքն ու շարականը ձեռքից բաց չը թողնող, վարագոյրի ետեւը «գործեր» կատարող, բայց հրապարակում—կատարեալ Մոլչալին։ Ֆամուսով եւ մի եւ նոյն ժամանակ Մոլչալին,—որքան էլ դա զարմանալի լինի, բայց եւ այնպէս իրողութիւն է մեզանում։

Շարունակենք։ Նոր ընտրված 12 լիազօրներից 7—8-ը ազգականներ են միմեանց հետ. 5—6 հոգի երբէք ոչ մի հասարակական գործի չեն մասնակցել մինչեւ հիմա եւ ոչ մի հասարակական պաշտօն չեն վարել։ Ութ հոգի վաճառականներ են, որոնցից 4-ը ալիւրավաճառ, 1-ը գինեվաճառ, մէկը մի հարուստ թուրքի մօտ է ծառայում եւ այլն։ Կարելի է ասել, մի ինտելիգէնտ եւ մի 3—4 կիսաինտելիգէնտ անձնաւորութիւններ կան։ Մնացածները շատ քիչ գաղափար ունեն իրանց ստանձնած պարտականութիւնների մասին։—Ազգակցական կապերի հետ միասին, ի հարկէ, մեծ դեր է խաղում եւ հարստութիւնը. բաւական է, որ մէկը կարճ ժամանակում մի քանի հազար ձեռք բերեց, շորերը փոխեց կամ նոր տուն չինեց. նա արդէն «արժանաւոր» անձնաւորութիւն է ամբոխի համար։ Ոչ ոք չէ հետաքրքրվում, թէ ինչ ճանապարհով է նա հարստացել։

Ընտրութիւնների ժամանակ ազգակցական կամ հարստութիւնով առաջնորդվելու տեսակէտից մեր քաղաքը շատ չէ տարբերվում գիւղերից. շատ գիւղերում «հավփայութեան» հետ միասին մեծ դեր է խաղում եւ մի տիկ «բախին» (օղին). ուրիշ տեղեր մեծ դեր է խաղում արտաքին տպաւորութիւնը. այդ պատճառով էլ ընտրվել ցանկացող գիւղացին երեսը կը սափրէ, բեխերը կոլորէ, լաւ կը հագնվի, ինչպէս ասում են, կարմիր «տրխատաններ կանցկացնէ տրեխներին ու այնպէս դուրս կը գայ գիւղամէջ։ Մեր քաղաքում էլ, դիցուք, մի երկյարկանի տուն, մի մուշտակ ընդունակ են յեղաշրջելու ընտրողների «համոզմունքը»։ Այստեղ՝ մուշտակ, այնտեղ՝ «տրխատան». ըստ կզբունքը մնում է նոյնը. միայն այստեղ քուէներ կան, տուփեր կան. ուրեմն տարբերութիւնը միայն արտաքին է։

Մեր այդ քաղաքային լիազօրները հիմա հաստատված են իրանց պաշտօններում, կատարում են իրանց դերերը եւ մենք միանգամից վայելում ենք մեր ընտրութիւնների պտուղը։ Անցեալ փետրվարի 28-ին տեղի ունեցած քաղաքային լիազօրների ժողովին ներկայ էին եւ բազմաթիւ կողմնակի հանդիսականներ, որովհետեւ այդ ժողովում պէտք է ընտրվէին քաղաքային աւագը եւ նրա օգնականը։ Այդ ժողովը շատ ծանր տպաւորութիւն թողեց ամեն մի անաչառ հանդիսականի վրա։ Ժողովը բացվում է. քաղաքի «հայրերը» նըստած են գաթայի... ուզում էի ասել՝—սեղանի շուրջը, մի-մի սրած մատիտ ձեռքերին, մի-մի թերթ թուղթ առաջները, դէմքերի այնպիսի արտայայտութեամբ, որ կարելի էր կարծել, թէ համաշխարհային հարցեր են լուծում կամ առնուազը քրքրում են իրանց քաղաքի մօտ 300՝ ընտրվելու իրաւունք ունեցող՝ անձնաւորութիւնների ցուցակը, որ եղածներից արժանաւորներին ընտրեն... Սակայն իլլիւզիան շուտով անցնում է. սկսում են միմեանց չողոքորթել, շնորհակալութիւններ յայտնել. կանգնողներ են լինում, որ խօսեն, բայց կարծէք զըզջում եւ էլի նստում են։ Դրանք լոկ ծէսեր են, քանի որ ընտրութիւնները իսկապէս 5—6 ամիս առաջ են տեղի ունեցել ընտաներաբար, եւ այդ պատճառով այդ բոլոր դատարկ ձեւականութիւնները աւելի եւս անախորժ տպաւորութիւն են անում։ Կարծէք մի անգամ սեւացել, ապա զօռով ընտրվել եւ հասարակական պաշտօն էին ստանձնել, երդվել, որ գան իրանց ազգականներին ընտրեն։ Արդէն դուրսը «ընտրվածների» խնամիներից մէկը, ամենեւին չը քաշվելով, առաջարկում է, որ աւագի եւ իր օգնականի ռոճիկները աւելացընվեն, բայց երբ խնդրում են մատնանիշ անել, թէ ինչ գումարից կարելի է աւելացնել, նա առանց այլեւայլութեան ասում է, թէ քաղաքում մի քանի նոր տներ են շինվել. նրանցից ստանալիք քաղաքային եկամուտը կարելի է դրան յատկացնել։ Երեւի այդ պարոնի աչքերը մութ գիշերները լոյս են տալիս եւ խաւարում թաղված փողոցներով անցնելիս՝ լապտերի կարօտ չեն լինում, որ ամեն մի նոր կօպէկ ուզում է յատկացնել խնամիների ռոճիկներին։

Մեզանում դա սովորութիւն է. չեն քաշվում, օրինակ, հրապարակով մի ազգական գինեվաճառի պաշտպանել եւ նրա վրա քիչ տուրք նշանակել, միայն այն պատճառով, որ նա ազգական է, իսկ նոյնանման մի ուրիշի վրա շատ նշանակել, որովհետեւ նա ազգական չէ եւ այլն։ Ապա հին քաղաքային աւագ պ. Ա. Գրիգորեան վեր է ընտրվում իր պաշտօնում, իսկ նրա օգնական ընտրվում է պ. Ս. Մառանջեան։

Վերջացնելով մեր նամակը՝ մենք աւելացնում ենք, որ սրտացաւ ենք դէպի Ախալքալաքի բոլոր հասարակական գործերը եւ այդ պատճառով ոչ ոք չը պիտի խուսափէ եւ նեղանայ մեր բարեացակամ քննադատութիւնից։

Սալլիւմեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Աստրախան, մարտի 22-ին

«Մշակի» 47 համարի «Կովկասի պատմութեան վերաբերութեամբ» յօդուածում ասված է հետեւեալը. «Անկասկած՝ այն հին աշխարհակալների արքունիքներում, որոնք տիրել էին մեր երկրին, գտնվում են եղել աշխատութիւններ եւ Կովկասի մասին։ Արաբիայի, Պարսկաստանի, Թուրքեստանի որոշ տեղերում պահպանված պէտք է լինեն յիշատակարաններ մեր երկրի եւ նրա ժողովրդի մասին»։

Կարեւոր եմ համարում իբրեւ հաստատութիւն այդ խօսքերի յայտնել, որ ես Սմրղանդ եղածս միջոցին, 1897 թուին, հետաքրքիր եղայ գիտենալու, թէ կա՞յ արդեօք որ եւ է պատմական յիշատակարան Լանկթամուրի կենսագրութեան եւ գործերի մասին, եւ երեւաց մի ձեռագիր մատեան, պարսկերէն լեզուով, որ նկարագրում է Ամիր-Թամուրի (գրքի մէջ միշտ այդպէս է կոչվում Լանկթամուրը) արշաւանքները դէպի Հայաստան եւ Վրաստան։ Ժամանակիս սղութեան պատճառով միայն երկու երեկոյ կարդալ եւ թարգմանել տալով այդ ձեռագրի ցանկից ընտրած մի քանի հատուածներ, համոզվեցի, որ հետաքրքիր նիւթեր կան նրանում հայերի եւ վրացիների նկատմամբ։ Ի միջի այլոց գտայ նրա մի գըլխում ասված թէ՝ երբ Ամիր-Թամուրը պատերազմական արշաւանքներ կատարելով հասած էր Վրաստանի սահմանները, նրա մօտ եկաւ Շամքորի մէջլիք Գուրգէն եւ հպատակութիւն յայտնեց. Ամիր-Թամուրը սիրով ընդունելով նրան՝ վերահաստատեց իր պաշտօնի մէջ եւ վերադարձրեց իր տեղը, հաստատութեան հրովարտակի մէջ հետեւեալ երեք պարտաւորութիւնները դնելով նրա վրա. 1, Մէջլիք Գուրգէնը պիտի վճարէ տարեկան որոշ տուրք. 2, եթէ Ամիրը պատերազմ ունենայ թշնամիների հետ, Մէջլիքը պարտաւոր է տալ նրան մի զօրագունդ. 3, Մէջլիքի իշխանութեան սահմանում բնակող մահմեդականներին ոչ մի նեղութիւն չը տալ եւ չը ճնշել։

Այսքանն էլ ինքն ըստ ինքեան բաւական է ցոյց տալու այդ յիշատակարանի գոնէ քաղուածօրէն թարգմանելու կարեւորութիւնը մեր եւ առհասարակ Կովկասի պատմութեան համար։ Այս առաջին անգամն ենք լսում Լանկթամուրին ժամանակակից եւ նրանից պաշտօնում վերահաստատված Շամքորի հայ Մէջլիք Գուրգէնի անունը. նոյն ժամանակի հայ պատմիչների գրուածներում, որքան ինձ յայտնի է, այդ անունը չը կայ յիշված։

Բացի սպասելի նոր-նոր տեղեկութիւններից, այդ պատմական յիշատակարանը հետաքրքիր է եւ մի այլ տեսակէտից. նրա Լանկթամուրը մեր պատմիչների արիւնծարաւ հրէշը չէ, որ ամեն տեղ միայն սրով եւ հրով աւեր եւ սպանութիւն գործելու վայրագ հաճոյքն է ցոյց տալիս, այլ մի աշխարհակալ, որ եթէ դիմադրողներին եւ կասկածաւորներին անխնայ ջարդել, կոտորել գիտէ, գիտէ եւ կամովին անձնատուր լինողներին ոչ միայն վնաս չը տալ, այլ եւ նոյն իսկ լայն հայեացքով վերաբերվել հպատակների ինքնուրոյնութիւններին եւ կրօնական ազատութեանը։ Մէջլիք Գուրգէնի վրա դրված պարտաւորութիւնների երրորդ կէտը ցոյց է տալիս, որ մահմեդականներին քրիստոնեաներից չէ զերադասել առանձին արտօնութիւնների կողմից, այլ միայն կամեցել է նրանց քաղաքացիական կամ կրօնական ազատութիւնն էլ ապահովել քրիստոնեաների երկրներում։

Երեւում է, որ այս յիշատակարանը նոյն իսկ Լանկթամուրի կամքով եւ թելադրութեամբ կազմված՝ անցքերի պաշտօնական արձանագրութիւն պիտի լինի, քանի որ նրանում հրովարտակի բովանդակութիւնն էլ նշանակված է. հետեւաբար զգուշութեամբ պիտի նայել նրա տուած տեղեկութիւնների վրա, միայն թէ այդպէս ընդունելով՝ պիտի կարծել, թէ Միջին Ասիայի անապատներից դուրս եկած այդ ահարկու աշխարհակալն էլ ունեցել է դիւան եւ դպրութիւն։

Այդ ձեռագրի հատուածները սկզբում կարդում եւ թարգմանում էր ինձ մի սարթազդի ժողլա, որ թէեւ պարսկերէն լաւ էր հասկանում, բայց ռուսերէն թարգմանելում մեծ դժուարութիւն էր կրում. յետոյ խնդրեցի այդ նեղութիւնը կրել նահանգապետի դիւանատանը ծառայող մի սարթ երիտասարդի, որ ռուսերէնի թարգմանում էր թէեւ շատ ազատ, բայց տեղ-տեղ բնագրի լեզուն հասկանալ դժուարանում էր։ Ցաւում եմ, որ այդ ձեռագրի մի օրինակը գրել տալու եւ ինձ ուղարկելու խոստումը մնաց մինչեւ այսօր առանց հետեւանքի, ուստի եւ անկարող եմ սրանից աւելին հաղորդել ընթերցողներին այդ յիշատակարանի մասին։

Արիստակէս եպիսկոպոս Սեդրակեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

«Մշակի» ներկայ համարը բաղկացած է $1^1/_2$ թերթից։

—

Զատկական տօների պատճառով «Մշակի» հետեւեալ համարը № 73 լոյս կը տեսնի ապրիլի 6-ին, ուրբաթ օր։

—

Մեզ հաղորդում են, որ հինգշաբթի, մարտի 29-ին, տեղի ունեցաւ Թիֆլիսի Հրատարակչական ընկերութեան վարչութեան եւ լիքվիդացիական յանձնաժողովի միացեալ նիստը Երեւանի թեմական դպրոցի հոգաբարձութեան կողմից եկած ներկայացուցիչների, այն է՝ պ.պ. Գ. Տէր-Խաչատրեանի եւ տեսուչ Բ. Տատեանի հետ։ Ժողովի նպատակն էր պայմանաւորվել այն եղանակների մասին, որոնցով պէտք է աւարտվեն բոլոր հաշիւները եւ ընկերութեան գործը յանձնվի Երեւանի դպրոցի հոգաբարձութեանը։ Որոշվեց գրքեր յանձնելու գործը սկսել անմիջապէս հետեւեալ օրվանից եւ հոգալ բոլոր հաշիւները պարզելու, եղած պարտքերը վճարելու եւ ապառիկների ցուցակ կազմելու մասին։

—

Մի պարոն, որ չէ ցանկանում յայտնել իր անունը, ուղարկել է Բագուից խմբագրութեանս 50 ռուբլի Զատկի տօներին աղքատներին բաժանելու համար։ Նոյն նպատակով ստացանք տիկին Զարուհի Սաղաթելեանից 3 ռուբլի։

—

Հրէական լրագիրների խօսքով, հրէութեան ամենաչքաւոր դասակարգի մէջ, մանաւանդ գաւառներում, կրկին սկսվել է երեւալ Ամերիկա գաղթելու ցանկութիւն, գլխաւորապէս Արգենտինա։ Ամերիկայից ստացված նամակները մանիֆէստների նման են կարդացվում ամբողջ ամբոխի առաջ փողոցներում, շուկաներում եւ այլ տեղերում։

—

Պետերբուրգում կազմակերպվում է կանանց մի նոր ընկերութիւն, որի նպատակն է պաշտպանել այն բանուոր կանանց շահերը, որոնք աշխատում են գործարաններում, կալուածատիրական հողերում, արհեստանոցներում եւ մասնաւոր առեւտրական ձեռնարկութիւններում։ Բացի նիւթական շահերի պաշտպանութիւնից՝ ընկերութիւնը կաշխատէ տարածել բանուոր կանանց մէջ եւ կրթութիւն, կը կազմէ երեկոյեան դասընթացքներ, հանրամատչելի գասախօսութիւններ եւ փոխադարձ օգնութեան գրամարկղներ կանանց համար։ Սկզբում ընկերութիւնը կը գործէ միայն Պետերբուրգում եւ Մոսկվայում։ Ընկերութեան կանոնադրութիւնը արդէն մշակված է եւ մոտիկ ապագայում կը ներկայացվի կառավարութեան հաստատութեան։

—

Բժշկական դէպարտամէնտի մերձաւոր նիստերից մէկում, ինչպէս հաղորդում են մայրաքաղաքի լրագիրները, կը քննվի վտանգաւոր եւ վնասակար արբեցողներին ստիպողա-

բար առանձին բուժարաններում զետեղելու օրինագիծը։

—

«Церковныя Вѣдомости» լրագրի 17-րդ համարում տպագրված է կոմսուհի Ս. Ա. Տոլստայայի նամակը միտրոպոլիտ Անտոնիին եւ միտրոպոլիտի պատասխանը։ Կոմսուհու նամակը հետեւեալ բովանդակութիւնն ունի. «Ձերդ բարձր օրթոդոքսութիւն։ Կարդալով երէկվայ լրագիրներում Սինոդի խստասիրտ կարգադրութիւնը իմ ամուսին կոմս Լեվ Նիկոլայեվիչ Տոլստոյին եկեղեցուց հրաժարեցնելու մասին եւ տեսնելով եկեղեցու հովիւների ստորագրութիւնների մէջ եւ ձեր ստորագրութիւնը, ես չը կարողացայ բոլորովին անտարբեր մնալ դէպի այդ հանգամանքը։ Իմ վշտալից զայրոյթը անսահման է։ Եւ ոչ այն տեսակէտից, թէ այդ թղթի պատճառով հոգեպէս կը կորչի իմ ամուսինը. դա մարդկանց գործ չէ, այլ Աստուծու գործ է։ Մարդկային հոգու կեանքը կրօնական տեսակէտից ոչ ոքի, բացի Աստուծուց, յայտնի չէ եւ, բարեբաղդաբար, ենթակայ չէ։ Բայց այն եկեղեցու տեսակէտից, որին ես եմ պատկանում եւ որից երբէք չեմ հրաժարվի, որ ստեղծել է Քրիստոս Աստուծու անունով օրհնելու համար մարդկային կեանքի բոլոր նշանաւոր րոպէները՝ ծնունդը, ամուսնութիւնը, մահը, մարդկային վշտերն եւ ուրախութիւնները... որ բարձրաձայն պէտք է հռչակէ սիրոյ եւ թողութեան օրէնքը, քարոզէ սէր դէպի թշնամիները, դէպի մեզ ատողները, աղօթէ ամենքի համար,—ահա այս տեսակէտից ինձ համար անըմբռնելի է Սինոդի կարգադրութիւնը։ Նա կը ծնեցնէ ոչ թէ համակրանք (գուցէ միայն «Моск. Вѣдомости»-ի մէջ), այլ զայրոյթ մարդկանց մէջ եւ մեծ սէր ու համակրանք դէպի Լեվ Նիկոլաեվիչը։ Արդէն մենք ստանում ենք այդպիսի յայտարարութիւններ—եւ նրանք վերջ չեն ունենայ—ամբողջ աշխարհից։ Չեմ կարող չը յիշել եւ մի վշտի մասին, որ ես կրեցի այն անմիտ լուրի պատճառով, որի մասին ես լսել էի առաջ, այսինքն Սինոդի գաղտնի հրահանգի մասին քահանաներին, եկեղեցում թաղման կարգ չը կատարել Լեվ Նիկոլաեվիչի վրա, նրա մահվան դէպքում։ Ո՞ւմ են կամենում պատժել, մեռած մարդուն, որ այլ եւս ոչինչ չէ զգում, թէ նրան չրջապատող հաւատացեալ մերձաւորներին։ Եթէ դա սպառնալիք է, ապա ուրեմն ո՞ւմ եւ ինչ բանի։ Մի՞թէ իմ ամուսնու թաղման կարգը կատարելու եւ նրա համար եկեղեցում աղօթելու համար ես չեմ գտնի կամ մի այնպիսի կարգին քահանայ, որ չի վախենայ մարդկանցից սիրոյ իսկական Աստուծու առաջ, կամ ոչ-կարգին քահանայ, որին ես կաշառեմ մեծ փողով այդ նպատակի համար։ Բայց ինձ այդպիսի բան հարկաւոր էլ չէ։ Ինձ համար եկեղեցին վերացական հասկացողութիւն է եւ նրա պաշտօնեայ ես ընդունում եւ ճանաչում եմ միայն այնպիսիներին, որոնք իսկապէս հասկանում են եկեղեցու նշանակութիւնը։ Իսկ եթէ եկեղեցի ճանաչենք այնպիսի մարդկանց, որոնք յանդգնում են իրանց չարահոգութեամբ խախտել ամենաբարձր օրէնքը—Քրիստոսի սէրը, այն ժամանակ վաղուց մենք, իսկական հաւատացեալներս եւ եկեղեցի այցելողներս, կը հեռանայինք նրանից։ Եւ եկեղեցուց հրաժարվելու մեղքի մէջ յանցաւոր են ոչ մոլորված մարդիկ, այլ նրանք, որոնք գոռոզութեամբ եկեղեցու գլուխ են ընդունում իրանց եւ սիրոյ, հեզութեան ու ներողամտութեան փոխարէն, հոգեւոր դահիճներ են դարձել նրանց համար, որոնց աւելի չուտ թողութիւն կը տայ Աստուած՝ նրանց հեզ, երկրային բարիքներից միանգամայն հրաժարված, սիրով եւ կարեկցութեամբ լի կեանքի համար—թէպէտ եւ այդ կեանքը լինէր եկեղեցուց դուրս, քան եկեղեցու այն հովիւներին, որոնք կրում են ադամանդեայ վեղարներ ու աստղեր, բայց պատժում եւ հրաժարեցնում են մարդկանց եկեղեցուց։ Իմ խօսքերը հերքել կեղծաւոր ապացոյցներով հեշտ է։ Բայց ճշմարտութեան եւ մարդկանց իսկական դիտաւորութիւնների խորին հասկացողութիւնը ոչ ոքի չի խաբի։ 1901 թ. փետրվարի 26-ին։ Կոմսուհի Սոֆիա Տոլստայա»։

—

ՆՈՐ-ԲԱՑԱԶԷՏԻՑ մեզ գրում են. «Մեր գաւառում եղանակը սաստիկ ցրտել է եւ ձիւն է եկել։ Դաշտային պարապմունքները, որոնք արդէն սկսվել էին կանոնաւոր կերպով առաջ գնալ, դադարեցին»։

—

ԿԵՐՉԻՑ մեզ գրում են. «Մարտի 22-ին, Սիմֆերոպոլի նահանգական դատարանի գաւառական անդամի մօտ նշանակված էր սկզբնական քննութիւն մի չը լված վաշխառութեան գործի։ Մեղադրվում են հաշտարար դատաւորների վճռով սահմանվող պատիժների կանոնագրքի 180 յօդուածի համաձայն, մեր Կերչի հայոց եկեղեցու երէցփոխ պ. Սար. եւ նրա եղբայր Ցակ. Պօղոսեանները։ Հրաւիրված էին 18 վկաներ, համարեա բոլորն էլ Կերչի հայ հասարակութեան հարուստ դասակարգից։ Մեղադրական թերթին նայելով, եղբ. Պօղոսեանները գրաւական առնելով 60,000 ռուբլիանոց անշարժ կայք, պարտք են տուել 8,500 ռուբլի փող Տէր-Աստուածատրեանցին 15 ամիս ժամանակով, վերցնելով 3000 ռուբլի։ Տ. Աստուածատրեանը, կամենալով որչափ կարելի է չուտով վճարել եւ ազատվել պարտքից, 11-րորդ ամսում վճարում է պարտքի համարեա կէսը՝ 4,300 ռուբլի—600 ր. տոկոսից եւ 3,700 ր. դրամագլխից, իսկ մնացեալը վճարում է 14-րորդ ամսում։ Վերջնական հաշուի ժամանակ Պօղոսեանները սխալմամբ ստանում են էլի մի 1320 ր., բացի 3,000 ր. տոկոսից։ Չը նայելով որ մի քանի ժամից յետոյ Տէր-Աստուածատրեանցը, նկատելով պատահած սխալմունքը, գնում է Պօղոսեանի մօտ եւ մի շաբաթ շարունակ մարդիկ է մէջ գցում, բայց մարդկային ագահութիւնը յաղթող է հանդիսանում, եւ առիթ է դառնում գործի բացվելուն։ Այժմ թէեւ Պօղոսեանները շատ են աշխատում գործը հաշտութեամբ վերջացնել, եւ պ. երէցփոխը նոյն իսկ դատարանում յայտնեց, թէ պատրաստ է յետ դարձնել իր ստացածի մի մասը (չեմ յիշում թէ որչափ), միայն թէ գործը վերջանայ, բայց դժբախտաբար արդէն ուշ է։ Այդ օրը գործը յետաձգվեց մի վկայի եւս հարցնելու համար Պօղոսեանների խնդրով։»

—

ԳԱՆՁԱԿԻՑ մեզ գրում են. «Մարտի 29-ին, գիշերը, գարնանային տաք եղանակին յաջորդեցին այնպիսի ցրտեր, որոնց նմանը այս տարվայ դեկտեմբերին չենք հանդիպել։ Ցրտերը ահագին վնասներ են պատճառել պտղատու ծառերին, գլխաւորապէս վնասվել են նորաբողբոջ վազի չչներն ու տերեւները, որոնք չորացել ու սեւացել են եւ կենդանանալու յոյսեր չեն տալիս։ Գանձակեցիների այգիները երկրորդ տարին է, որ վնասվում են բնութեան պատահարներից։ Անցեալ տարի մի լրիւ հիւանդութիւնը իր արհաւիրքը գործեց, իսկ այս տարի, մարտի 29-ին, անսպասելի ցրտերը։ Պատմում են, հարեւան Ելէնէնդորֆի այգիներում վազող ջրերը ցրտից սառուց են կազմել»։

—

ԱԽՏԻՐԿԱՑԻՑ մեզ գրում են. «Այս քանի օրերս Խարկով-Նիկոլաեվսկի երկաթուղային գծի վրա հետեւեալ դէպքն է տեղի ունենում։ Կիրիկովկա եւ Սիրօվոդկա կայարանների միջեւ գտնվող «բուտկաններում» ծառայողներից մէկը սիրահարվում է իր ընկերոջ կնոջ վրա։ Այդ բանը նկատում է կնոջ տասը տարեկան աղջիկը եւ յայտնում է հօրը։ Հայրը չէ հաւատում, բայց մի եւ նոյն ժամանակ չէ ժոռանում աղջկայ ասածը։ Երկրորդ անգամ, երբ աղջիկը պնդում է իր ասածի վրա, մարդը սկսում է նախատել կնոջը եւ մի լաւ ծեծում է։ Սէրը զօրեղ լինելով, մայրը կամենում է ազատվել աղջկայ լրտեսութիւնից եւ յայտնում է սիրեկանին։ Երկուսը միասին խորհրդակցելով՝ վճռում են այրել աղջկան վառարանում։ Այդ բանը լսում է աղջիկը դռան ետեւից, գնում է հարեւան «բուտկան» եւ յայտնում է նրանց։ Հարեւանները ուշադրութիւն չեն դարձնում աղջկայ խօսքերին եւ մի կերպ, սիրտ տալով, երեկոյեան ուղարկում են տուն։ Զանցած երկու ժամ, կասկած է զարթնում նրանց մէջ եւ ուղարկում են մէկին լրտեսելու։ Լրտեսը նկատում է պատուհանից, թէ ինչպէս սպանված աղջկայ դիակը թաղցրին վառարանի մէջ։ Ներս է մտնում, ներողութիւն խնդրում, որ անկոչ հիւրի պէս է եկել եւ թոյլտուութիւն է խնդրում վառարանից կրպցնելու իր չիբուխը։ Տանտիկինը կանգնում է վառարանի առաջ եւ առաջարկում է լուցկի։ Անկոչ հիւրը ասում է. «Մխախոտս թաց է, լուցկիով չի կպչի», եւ հրելով տանտիկնոջը, բաց է անում վառարանը եւ տեսնում է աղջկայ կիսախանձ դիակը։ Այդ բոպէին մօտենում է մարդատար գնացքը. ցոյց տալով կարմիր դրօշակը, կանգնեցնում է եւ յայտնում եղելութիւնը ուր հարկն է։ Սիրահարները կալանաւորված են»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—«New-York Herald»-ի թղթակիցը հեռագրում է Պեկինից. «Իմ ունեցած տեղեկութիւններով՝ երէկ Եապօնիան Չինաստանին տուեց գրաւոր հաւատիացումն, թէ նա մասնակից կը լինի Չինաստանի վիճակին այն բոլոր հետեւանքների մէջ, որոնք կարող են ծագել մանջուրական համաձայնութիւնը չը ստորագրելուց, եթէ մինչեւ անգամ այդ հետեւանքների մէջ լինի եւ պատերազմ»։ Եապօնական մամուլը, «Մէյտէրի գործակալութեան» ասելով, շարունակում է յամառութեամբ ներշնչել եապօնական կառավարութեանը, որ նա ոչ մի զիջողութիւն չանէ Ռուսաստանին մանջուրական հարցում։

—«New-York Herald» լրագրին հաղորդում են Վաշինգտոնից, թէ Ագվինալդո, Ֆիլիպպեան կղզիների պարագլուխը, որ այժմ գերի է ընկել ամերիկացիների ձեռքը, գեներալ Մակ-Արտուրի միջոցով մի նշանաւոր առաջարկութիւն է արել Միացեալ-Նահանգների կառավարութեանը՝ Ֆիլիպպեցի ապստամբների անձնատուր լինելու հարցի վերաբերմամբ։ Այդ առաջարկութիւնը յանձնվեց մինիստրութեան քննութեանը։ Բուտ հեռագրով հրահանգ ուղարկեց Մակ-Արտուրին, թէ նախագահը բանակցութիւններ չի սկսի Ագվինալդոյի հետ, բայց եթէ վերջինը գործ կը դնէ իր ազդեցութիւնը Ֆիլիպպեան կղզիների խումբը խաղաղացնելու համար, այն ժամանակ Միացեալ-Նահանգները ուրախութեամբ օգուտ կը քաղեն նրա ազդեցութիւնից եւ ի նկատի կառնեն Ագվինալդոյի վարմունքը, երբ վերջնականապէս կը քննվի նրա վիճակը մնօրինելու հարցը։

—«Սէրվէթ» լրագրի ասելով՝ մտադրութիւն կայ չինել հեռագրական հաղորդակցութեան անընդհատ գիծ Կ. Պոլսի եւ Կալկուտտայի ու Բոմբէյի միջեւ։ Գծի ծախսը հաշուած է 308,408 ֆրանկ եւ այդ գումարը արդէն ժողովված է պօստ-հեռագրական վարչութեան ներկայ տարվայ բիւջէյի մէջ։

—«Հավասի գործակալութեան» հեռագրում են Աթէնքից, թէ արքայորդի Գէօրգի արձակեց պաշտօնից արդարադատութեան մինիստրութեան խորհրդական Վէնիզէլօսին նրա համար, որ նա խորհրդի նիստի ժամանակ արծարծում էր Կրէտէն ինքնուրոյն իշխանութիւն դարձնելու գաղափարը, որ, ինչպէս ասված է Վէնիզէլօսին արձակելու հրամանի մէջ, հակառակ է Կրէտէի գերագոյն կոմիսարի, արքայորդի Գէօրգիի հայեացքներին։ Արքայորդու այս կարգադրութիւնը թէ Կրէտէում եւ թէ Աթէնքում, որտեղ Վէնիզէլօսի առաջարկութիւնը կատաղի բանակոուի տեղիք է տուել, ընդհանուր հաւանութիւն է գտնում ազգաբնակութեան կողմից։

—«Daily Mail»-ին հեռագրում են Իոկոհամայից, թէ վերին ժողովի նախագահ իշխան Կոնոյիէ իր ճառի մէջ չոչափեց պատերազմի հարցը Մանջուրիայի պատճառով եւ ասաց, թէ պատերազմի դէպքում Եապօնիան կարող է հաւատացած լինել, որ Անգլիան եւ Գերմանիան բարեացակամ չէզոքութիւն կը պահպանեն։ Ամէրիկան, ի հարկէ, չի խառնվի գործի մէջ, իսկ Ֆրանսիան, երեւի, փոքր ինչ անախորժութիւններ կը պատճառէ Եապօնիային իր կողմից, մանաւանդ երբ Եապօնիան ցանկանայ Ֆորմոզայի ափերի մօտ ցոյց անել իր ծովային ոյժերով, բայց Ֆրանսիայից սպասված վնասը դրանով էլ կը սահմանափակվի։ Շնորհիւ իր զօրքի գերազանցութեան՝ Եապօնիային այնքան էլ դժուար չի լինի հալածել Ռուսաստանին Մանջուրայից։

—Բերլինի մամուլի մեծամասնութիւնը մի առանձին նշանակութիւն չէ տալիս իտալական մինիստր-նախագահ Ցանարդէլլիի տեսակցութեանը գերմանական պետական կանցլերի հետ Վէրօնա կայարանում։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

ՄԱՆՐԱՆԿԱՐ

—

Հայերը այս անգամ մի նախանձելի վիճակի մէջ պէտք է լինեն։ Նրանք այսօր, մարտի 31-ին, թաթախման օրը, միմեանց կը շնորհաւորեն, միմեանց կաւետեն Մեծ-Տօնի գալուստը։

Անկասկած է, որ եկել է Զատիկը։

Իսկ միւս քրիստոնեաները այդ մի եւ նոյնը պէտք է կատարեն այն ժամանակ, երբ կը լինի ապրիլի 1-ը, միմեանց սխալեցնելու, միմեանց խաբելու օրը։

Ո՞վ գիտէ, արդեօք մարդիկ կը հաւատան այն բարեմաղթութիւններին, որ կը շռայլվեն Զատկի օրը։ Անկասկած՝ թիւրիմացութիւններ առաջ կը գան։

Ես ամենեւին չէի ցանկանայ այդպիսի վիճակի մէջ լինել եւ իմ բարեացակամութիւնը տարակուսանքի ենթարկել։ Ուրախ եմ, որ իմ բոլոր ասելիքը տեղի կունենայ ոչ ապրիլի 1-ին։

Այդ կարեւոր է մանաւանդ այս տարի, երբ մեր շուրջը կատարվում են անհասկանալի, հակասական, խորհրդաւոր եւ առեղծուածական բաներ։

Հէնց վերցրէք եղանակը։

Մարտի առաջին շաբաթները այնքան տաք էին, որ շատերը անկարող էին նոյն իսկ ամառվայ վերարկուներով մոն գալ, իսկ վերջին շաբաթվայ ընթացքում մենք միտներս բերինք մեր վառարանները եւ նորից հագանք մեր ձմեռվայ վերարկուները։

Կարդացէք լրագիրները, լսեցէք ձեր ծանօթների զանազան պատմութիւնները եւ ասացէք, թէ արդեօք դուք գլուխ էք հանում հիմիկվայ գործերից։ Մենք կարծես մի մշտական ապրիլի մէջի մէջ ենք գտնվում։

Ես մտադիր չեմ ձեզ հետ, ընթերցողներ, հեռու տեղեր գնալ եւ քննել, արդեօք եւրոպան ուզում է նուաճել չինացիներին, թէ ազատ պահել. արդեօք եւրոպացիները իրանց մէջ խաղաղութեան գործով են զբաղված, թէ պատերազմի պատրաստութիւններով, արդեօք բօքսերները ընկճված են եւ յաղթված, թէ կարող են դեռ երկար պատերազմել, արդեօք Թիւրքիան ընկել, մանկացել է, թէ դեռ կենդանի է եւ կազդուրվում է եւ այլն։

Նայեցէք ձեր շուրջը եւ, եթէ կարող էք, վերլուծեցէք թիւրիմացութիւնները նոյն իսկ ամենափոքր չրջանում։

Թիֆլիսում, օրինակ, անցեալ կիրակի օր ընտրութիւններ էին կատարվում փոխադարձ կրեդիտի ընկերութեան մէջ։ Վարչութիւնը հանդէս եկաւ մի շարք թիւրիմացութիւններով։

—Պէտք է համարել իշխան Գ. Թումանեանին վերջացրած իր պաշտօնավարութեան ժամանակամիջոցը եւ նորից քուէարկել։

—Ոչ, նա դեռ պէտք է համարվի պաշտօնի մէջ եւ նրան չէ կարելի քուէի ենթարկել։

Այդ երկու կարծիքն էլ յայտնում է մի եւ նոյն վարչութիւնը։

Ինչո՞ւ։

Շատերը ասում են, որ այդ թիւրիմացութիւնը գիտակցական է եւ կատարելապէս կամովի։

Լուծեցէք հանելուկը։

Մի տասն օր առաջ Թիֆլիսում ժողովվել էին մի երեսուն հոգի հնագիտական ընկերութիւն կազմելու։

—Մենք ուզում ենք ինքնուրոյն ընկերութիւն կազմել, բայց մեզ տուէք ոչ ինքնուրոյնը։

Այդպէս էին ձեւակերպում իրանց ասածները ժողովականները։

Ինչո՞ւ։

—Գուշակեցէք։

Նոր ընկերութիւն ասացի, միտքս եկաւ մի օտարոտի զուգադիպութիւն։

Լրագիրներում տպված է, որ ապրիլի 5-ին, հինգշաբթի օր, Թիֆլիսի քաղաքային դումայի դահլիճում պէտք է տեղի ունենայ Թիֆլիսի հայոց Բարեգործական ընկերութեան ընդհանուր ժողովը։

Շատ լաւ։

Շարունակում եմ յայտարարութիւններ կարդալը եւ տեղեկանում եմ, որ նոյն ապրիլի 5-ին, նոյն դումայի դահլիճում, պէտք է տեղի ունենայ Արեւելագիտական ընկերութեան առաջին նիստը։

Մի եւ նոյն տեղում, մի եւ նոյն օրը։

Երէկվայ «Кавказъ» լրագիրը հաղորդում էր, որ դարձեալ ապրիլի 5-ին, հինգշաբթի օր, պէտք է տեղի ունենայ քաղաքային դումայի նիստը։

Մի եւ նոյն տեղում, մի եւ նոյն օրը։

Դուք մի բան արդեօք հասկացա՞ք։

Սակայն ես շատ չեղվեցի իմ հիմնական զրոյցից եւ Զատիկը մոռացայ։

Այդ ներելի պէտք է համարել։

Մեծ-պասի հետ դեռ նոր ենք վերջացրել մեր հաշիւները. իսկ ես դեռ պարտաւոր եմ իմ կատարած ճանապարհորդութեան նկարագրութիւնը ներկայացնել։

Այդ էլ տօներից յետոյ։

Այժմ զբաղվենք մեր բարեմաղթութիւններով եւ զատկական նուէրներով։

Ես իմ բարեմաղթութիւնները կը սկսեմ ցուցահանդէսից։ Կովկասեան ցուցահանդէսը, որ պէտք է բացվի աշնանը Թիֆլիսում, մի տեսակ կը ժողովէ մեր Կովկասի արդիւնաբերութեան եւ առօրեայ ու հասարակական կեանքի արտայայտութիւնները։

Ի՞նչ կարելի է ցանկալ այդ ցուցահանդէսին։

—Անշուշտ՝ լինել բազմակողմանի եւ լիակատար, կը պատասխանէք դուք։

Ես էլ հէնց այդ եմ ցանկանում. բայց դժբաղդաբար կան բաներ, որ չը պէտք է տեսնենք այդ ցուցահանդէսում։ Բայց պէտք էր տեսնել։

—Օրինակ ինչ, կը հարցնէք դուք։

Ցուցահանդէսը հանդէս կը բերէ չքեղ եւ փայլուն իրեր, գեղեցիկ գործուածքներ եւ յորինուածներ, պարզ ու բաղադրեալ մեքենաներ եւ գործիքներ։

Բայց նա չի ցոյց տայ այն, ինչ որ արդիւլում է մեր երկրին առաջ գնալ։ Նա չի ցոյց տայ այն բացասական կողմերը, որ երեւան են եկել կեանքի մէջ. նա չի արձանագրի մերարած յետադիմութիւնը։ Որքան ուսանելի կը լինէր, եթէ նա մեզ ցոյց տար մեր երկրի՝

վաշխառուների կարծրացած խիղճը,

գէշէֆտավախէրների բազմազան որոգայթները,

չքեղ պալատներում բուն դրած կեղտոտութիւնները,

մեր հոգեւոր հովիւների գայլային ոռնձգութիւնները,

մեր հազարաւոր փարիսեցիների առաձգական հոգին,

եւ այն եւ այն։

Զարժէ մի առ մի թուել։ Դա շատ երկար

մի ցուցակ է, գուցէ նոյն իսկ անվերջ։

Շարունակենք մեր միւս բարեմաղթութիւնները։

Թիֆլիսի քաղաքային ընտրողներին—մի այնպիսի ցուցակ, որի մէջ իւրաքանչիւր ազգ կազմում լինէր մեծամասնութիւն։

Նոր բացվող արեւելագիտական ընկերութեան—սէր դէպի արեւելքի ժողովուրդները։

Դեռ չը բացված հնագիտական ընկերութեան—վէճեր թէ ինչ ազգութեան էին պատկանում հնակաները, օղուզները եւ տրոգլոդիտները։

Թիֆլիսի ջրանցքին—տալ ջուր փոխանակ ցեխոտ հեղուկի։

Բագուի նաւթագործներին—մի հարիւր անգլիական, ֆրանսիական եւ բելգիական ընկերութիւններ, որոնք թանգ գներով վերցնէին նրանց հանքերը։

Բագուի երիտասարդներին—փոքր ինչ ազատ ժամանակ... թուղթ խաղալու եւ գինեկոնծութիւն անելու համար։

Բագուի տիկիններին — պատրաստութիւններ տաք ջրերը գնալու չաղութիւնից բժշկվելու համար։

Բագուի քաժիներին—խնայել մարդկանց գլուխները եւ այնտեղ վտանգաւոր քամիներ չը մտցնել։

Էջմիածնին—շարունակել եւ շարունակել «իր նիրհը դարեւոր»։

Էջմիածնի թանգարանին—Բոլոր առաջնորդների պատկերազարդ կենսագրութիւնները, ի փառս ապագայի։

Քահանաներին—յիշել, որ հարուստների մէջ չը հաս չը կայ, իսկ աղքատների մէջ մշտական չը հասութիւն է տիրում։

Երեւանի երկաթուղուն—ազատ լինել մարդատար գնացքներ չինելու ծախքից։—Այս բարեմաղթութիւնը աւելորդ է, որովհետեւ երկաթուղին պէտք է անցնի այնպիսի անապատներով, ուր բնակութիւն չը կայ։

Ախալքալաքցիներին—սովորել առանց հացի ապրելու։

Կաղզուանցիներին—աղահանքերի մէջ չորոնել արեգակի ճառագայթներ։

Պարսկահայերին—տարբերվել պարսիկներից մի որ եւ է լաւ բանով։

Անահիտ թերթին—քիչ մը ստակ (բովանդակութիւնը չափազանց է)։

Հանդէս Ամսօրեային—նորից ձեռք բերել կորցրածը։

Բաղմավէպին—յիշել, որ կեանքը վանք չէ եւ ժողովուրդները—վանական միաբանութեան կամ հնագիտական ընկերութեան անդամներ չեն։

Նոր-Մուրճին—ապացուցանել, որ ընթերցող հասարակութիւնը մեղք չունէր Հին-Մուրճի անաջողութեան հարցում։ Այդ ապացոյցը ի միջի այլոց աւելորդ չէ Ռիգայի հայ ուսանողութեան համար, որ մի նշանաւոր եւ ընտրոյ նամակ տպեց «Տարազում» եւ այդպիսով իրան անմահացրեց։

Մելեան քահանային—լաւ ճանաչեցէք եւ ուսումնասիրեցէք ախալցխացիներին։

Ախալցխացիներին—լաւ ճանաչեցէք եւ ուսումնասիրեցէք Մելեան քահանային։

Հայ ֆեմինիստներին—քննել Սերմացանի եւ Ս. Տէր-Աւետիքեանի վէճը «զաեավչիկուհիների» մասին։

Երէցփոխներին—իրաւունք բանտարկելու եւ աքսորելու հաշուետուներին։

Մեր օրիորդներին—Համբերութիւն. ինչ արած։

Մեր մանուկներին—փայտեայ եւ քարեայ ձուեր։

Մեր ընթերցողներին—չնորհաւոր Զատիկ։

Վրթին

„ՄՇԱԿԻ" ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

29 մարտի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Մարտի 29-ին, 6 ժամին կէսօրից յետոյ, Դանիայից Պետերբուրգ ժամանեց Թագուհի Կայսրուհի Մարիա Ֆէօդորովնա։ Ալէքսանդրովսկայա կայարանում Կայսրուհուն դիմաւորեցին Թագաւոր Կայսրը, Թագուհի Կայսրուհի Ալէքսանդրա Ֆէօդորովնա, Նորին Բարձրութիւն Թագաժառանգը եւ Մեծ Իշխանուհի Օլգա Ալէքսանդրովնա։ Կայարանից Նոցա Կայսերական Մեծութիւնները գնացին ձմերային պալատը։

ԿԱԶԱՆ։ Սառուցը շարունակում է շարժվել Վոլգա գետի վրա։

ՋԻՍՏՈՊՈԼ։ Կամա գետի վրա ամբողջապէս սառուցը շարժվում է։

ՄՈՍԿՎԱ։ Ձիւնի պատճառով, կողովից 91 վերստ հեռաւորութեան վրա, Դանկովսկայա ճիւղի ուղղութեամբ, ապրանքատար գնացքը հարիւր բանւորներով, որոնք ուղարկված էին ճանապարհը մաքրելու համար, մարտի 27-ին խորտակվեց։ Մի բանւոր սպանվեց, երկուսը ծանր կերպով վիրաւորված են։

ՊԷԿԻՆ։ Կապիտան Բարչ մեռած է գտնված Պէկինի շրջականներում։ Որքան պարզեց անյապաղ սկսած քննութիւնը, դա մի դժբաղդ դէպքի հետեւանք է։

ՊԷԿԻՆ։ Բարչ մեռած է գտնված ամարային պալատի մօտ հրացանի հարուածից առաջացած վէրքով մէջքի վրա։ Չէ կարելի ենթադրել, թէ սպանութիւնը կողոպտելու նպատակով է եղած, որովհետեւ ժամացոյցը եւ փողերը գրպանված են գրպաններում։

ՄԱԴՐԻԴ։ Մինիստրների երեկոյեան խորհրդի մէջ ընտրութիւնները նշանակված են ապրիլի 27-ին, իսկ կօրտէսների բացումը—յունիսի 7-ին։

ՊԷԿԻՆ։ Հնդկական չորրորդ հետեւակ բրիգադան կը կազմափոխվի. հնդկական երկու գնդեր կուղարկվեն Հնդկաստան, ուրիշ բրիգադաներ կը դրվին գեներալ Կէմպբէլլի հրամանատարութեան տակ։ Չորրորդ բրիգադայի հրամանատար գեներալ Կումմինս իր շտաբով վերադառնում է Հնդկաստան։

ՆԻԺՆԻ-ՆՈՎԳՈՐՈԴ։ Երէկ եւ այսօր, սառուցը շարժվելու ժամանակ, Օկա գետի վրա խորտակվեցին մինչեւ քսան զանազան նաւեր։ Վոլգայի վրա սառուցը կանգնած է. ջուրը արագութեամբ աւելանում է։

ՎԻԼԼԱՖՐԱՆԿԱ։ Ռուսաց «Կայսր Ալէքսանդր II» նաւը այցելելու ժամանակ, Լուբէ Պատուաւոր լեգիոնի կօմանդօրական խաչ չնորհեց այդ նաւի հրամանատարին։

ԲԵՐԼԻՆ։ Վալդերզէէ հաղորդում է Պէկինից, որ այն աւազակախումբը, որը մարտի 30-ին յարձակում գործեց Տանչժօուի վրա, 25 կիլօմէտր դէպի հիւսիս Պէկինից, ենթարկվեց երկրորդ արեւելա-ասիական հետեւակ գնդի հալածանքին Խժանպինժոյից, 30 կիլօմէտր դէպի հիւսիս Պէկինից, եւ ցրվեց, այնպէս որ 20 աւազակներ ապանվեցին։

ՊԱՐԻԶ։ Ռուսաց նաւատորմի անսպասելի գալուստը Վիլլաֆրանկա՝ ֆրանսիական ազգի պետին ողջունելու համար, իսկական ազգային ուրախութիւն է պատճառում Ֆրանսիային։ Լրագիրները ընդգծում են այդ բարեկամական ընթացքը։ Մէլինի օրգանը հետեւեալ խօսքերն է ասում. «Կայսր Նիկոլայ II-ի այդ ցոյցը ոչ միայն կը նպաստէ այն ժողովրդականութեան աճելուն, որ վայելում է Ցարը Ֆրանսիայում, այլ աւելի եւս կամրապնդէ այն կապերը, որոնք միացնում են այդ երկու երկիրները»։ «Rappel» ասում է. «Այդ նոյնը քաղաքականութեան եւ ջերմ բարեկամութեան ակից կը զգացվեն մեր համաքաղաքացիները, որովհետեւ դա նորից ապացուցանում է ֆրանսա-ռուսական դաշնակցութեան անկեղծութիւնը եւ ամրութիւնը։» «Radical» ասում է. «Այդ ցոյցը խորը արձագանք կը գտնէ ամբողջ Ֆրանսիայում»։

ՏՈՒԼՕՆ։ Ցերեկվայ 1 ժամ 30 րոպէին այստեղի նաւակայանն եկաւ ֆրանսիական նաւատորմը։ Մարակոցները, նոյնպէս եւ իտալական նաւատորմը եւ «Պէլայօ» սովորական ողջոյնը տուեցին թնդանօթաձգութեամբ։ «S-t Louis» զրահակիր նաւը, որի վրա գտնվում էր նախագահը, անցաւ իտալական նաւերի միջով, որոնց նաւաստիները ողջունեցին նախագահին «ուրայի» աղաղակներով, իսկ երաժշտական խմբերը նաւերի վրա ածում էին մարսէլիէզ։ Գէնուայի դուքսը եւ նրա շտաբը նաւի փոքր կամուրջից, որի վրա գտնվում էին, ողջունեցին նախագահին եւ մինիստրներին, եւ մօտ 2 ժամին Լուբէ զինարանի մօտ ափ իջաւ։

ՏՈՒԼՕՆ։ Գէնուայի դուքսը «Լէպանտօ» նաւից իջաւ 3 ժամին իր շտաբի հետ։ Նաւակայանում կանգնած 4 նաւերը ողջունեցին նրան թնդանօթաձգութեամբ։

ՏՈՒԼՕՆ։ Լուբէ երեկոյեան այցելեց Գէնուայի դուքսին Լէպանտօ նաւի վրա։ Նաւերը ողջունեցին նրան թնդանօթաձգութեամբ։ Երաժշտութիւնը «Լէպանտօի» վրա ածում էր մարսէլիէզ։ Լուբէ 12 րոպէ խօսակցեց դուքսի հետ, որից յետոյ գնաց. Դէլկասէ ապա յանձնեց դուքսին Պատուաւոր լեգիոնի օֆիցէրական մեծ խաչ։ Լուբէ, պրէֆէկտուրա վերադառնալով, ընդունեց այնտեղ իշխանութիւններին, որից յետոյ գնաց այն բանկէտը, որ սարքված էր զինանոցում ի պատիւ դուքսի. ամբոխը ճանապարհի վրա հիացմունքով ողջունում էր նրան ամբոխը։ Լուբէ ռուս եւ ուրիշ օտարազգի ու ֆրանսիական օֆիցէրների կենացն առաջարկեց, միացնելով մի եւ նոյն կենաց բաժակի մէջ բոլոր երկիրների ծովագնացներին, այն համերաշխութեան եւ անձնազոհութեան համար, որ նրանք ցոյց են տալիս մարդկութեանը։ «Պէլայօ»-ի հրամանատարը պատասխանեց՝ ուրախութիւն յայտնելով այն բանի առիթով, որ իրան է վիճակվել Սպանիայի կառավարութեան, ժողովրդի եւ նաւատորմի զգացմունքների արտայայտիչը լինել։ Նա Ֆրանսիայի բարօրութեան եւ նրա գեղեցիկ նաւատորմի կենացն առաջարկեց։ Տուլօն վերադարձած ռուսաց ականանաւերից մէկի հրամանատարը, չնորհակալութիւն անելով ռուսների պատին առաջարկած կենացի համար, ասեց. «Ձեր խօսքերը թափանցում են բոլոր ռուսների սրտերը։ Խմում եմ Ֆրանսիայի փառքի եւ ֆրանսիական նաւատորմի ու զօրքի բարգաւաճման կենացը։ Դուքսը յետադարձեց նաւատորմի գնալը մինչեւ շաբաթ, որպէս զի կարողանայ ներկայ լինել այն նախաճաշին, որ տալիս է ֆրանսիական նաւատորմի հրամանատարը։ Բանկէտից յետոյ Լուբէ եւ դուքսը քաղաքային խորհրդի շինութեան պատշգամբից նայում էին վենեցիական տօնախմբութեան վրա։ Քաղաքը եւ նաւակայանում եղած բոլոր նաւերը փառաւոր կերպով լուսավառված էին. նախագահը եւ դուքսը ոգեւորված եւ երկարատեւ ցոյցերի առարկայ էին։

ՏՈՒԼՕՆ։ Պրէֆէկտուրում ընդունելութիւն անելուց վերջը Լուբէ յանձնեց Պատուաւոր լեգիոնի երեք խաչ եւ ոսկէ շատ մեդալներ «Կարրո» նաւի նաւաստիների համար, որոնք փրկեցին «Russie» շոգենաւը Ֆարաման կղզու մօտ։

ՏՈՒԼՕՆ։ Գէնուայի դուքսի ճանապարհ ընկնելուց յետոյ Լուբէ, շրջապատված մինիստրներով, ընդունեց «Պէլայօի» օֆիցէրներին։ Հրամանատար Դիազ ուրախութիւն յայտնեց այն բանի առիթով, որ իրան է վիճակվել հաղորդելու նախագահին թագուհի-խնամակալուհու ողջոյնը։ Լուբէ չնորհակալութիւն եւ ուրախութիւն յայտնեց նրան այն փոխադարձ համակրութեան կապի առիթով, որը միացնում է Ֆրանսիան Սպանիայի հետ։ Ինքն շատ զգացված է «Պէլայօ» ուղարկելու համար, ասեց նա, եւ խընդրում է հրամանատարին յայտնել թագուհուն իր ակնածութեան եւ յարգանքի զգացմունքները։ Լուբէ ապա ընդունեց եպիսկոպական լէյտընանտին, որին յանձնեց Պատուաւոր լեգիոնի ասպետական խաչը. վերջապէս նախագահն ընդունեց ռուսաց երկու ականանաւերի հրամանատարին։ Դուրս գալու ժամանակ բոլոր օֆիցէրները դիմաւորվեցին բացագանչութիւններով. ռուսները բազմապատիկ ցոյցերի առարկայ էին։ 4 ժամ 10 րոպէին Լուբէ դուրս եկաւ պրէֆէկտուրից եւ նստեց նաւը՝ Գէնուայի դուքսի մօտ այցելութեան գնալու համար։ Ահագին եւ ոգեւորված ամբոխով լիքն են փողոցները։

ՏՈՒԼՕՆ։ Գէնուայի դուքսը ժամանեց հանդիսաւոր հանդէսով եւ անյապաղ ներս տարվեց Լուբէի մօտ, որի հետ մնաց մենակ. վերին աստիճանի սրտագին խօսակցութիւնը տեւեց 20 րոպէ։ Դուքսը յանձնեց նախագահին թագաւորի անունից Աւետման շքանշանի շղթան։ Լուբէ ապա ներկայացրեց դուքսին մինիստրներին եւ իր սվիտայի անձանց. դուքսը ներկայացրեց իր օֆիցէրներին։ 3 ժամ 50 րոպէին դուքսը նոյն հանդէսով ուղեկցվեց դէպի նաւահանգիստ։ Ամբոխը ողջունում էր դուքսին բացականչութիւններով եւ ծափահարութիւններով։

ՆԻՑՑԱ։ Պատասխանելով Լուբէի առաջարկած կենացին «Կայսր Ալէքսանդր II» կրէյսէրի վրա, ծովապետ Բիրիլով բաժակ բարձրացրեց Ֆրանսիայի, իր երկրորդ հայրենիքի, բարօրութեան համար, եւ ֆրանսիական նաւատորմի եւ զօրքի փառքի համար։ Լուբէ չնորհեց Պատուաւոր լեգիոնի ասպետական խաչ «Կայսր Ալէքսանդր II» նաւի կապիտան Բրանիցկուն եւ ակադէմիական պատանչան «Храбрый» նաւի մեքենավար Մաքսիմովին եւ միչման Ալէքսանդրովին։ Մատուցին շամպայն։ Լուբէ վերցրեց բաժակը եւ ասեց. «Ես երջանիկ եմ, որ Կայսր Նիկոլայ II ուղարկեց նաւատորմ ծովապետ Բիրիլովի հետ՝ ֆրանսիական հանրապետութեան նախագահին ողջունելու համար. ես շատ երախտագէտ եմ համակրութեան այս նշանի համար, բարձրացնում եմ բաժակը Կայսր Նիկոլայ II-ի, Կայսրուհու եւ մեր Բարեկամ ու Դաշնակից ռուս ժողովրդի, եւ ապա ռուսաց նաւատորմի բարօրութեան կենացը»։

ԿԱՊՇՏԱԴՏ։ Վերջին տեղեկութիւնների համեմատ, Բօտա պատրաստ է, որպէս ներկայացուցիչ բօէրների բոլոր զինուորական ոյժերի, սկսել բանակցութիւններ խաղաղութեան մասին։ Դէվէտի յետ նորերս նրա ունեցած բանակցութիւնների ժամանակ պարզվեց, որ Դէվէտ հակառակվում է անձնատուր լինելուն, բայց Բօտան համոզված է, որ Դէվէտ բարոյապէս անպատասխանատու մարդ է, եւ որովհետեւ նա մինչեւ այժմ միակ մարդն էր, որ արդեւք էր դառնում խաղաղութեան դաշն կապելուն, այդ պատճառով Բօտա ցանկանում է կրկին բանակցութիւններ սկսել։ Կարծում են, որ եթէ Բօտա անձնատուր լինի, Դէվէտին կարելի է շուտով ընկճել, որովհետեւ նրա ոյժերը հետզհետէ պակասում են։ Կիսապաշտօնական տեղեկութիւնների համեմատ, Բօտան կրկին տեսակցութիւն ունէր Կիտչենէրի հետ։

30 մարտի

ՏՈՒԼՕՆ։ «Լէպանտօ» նաւի վրա նախաճաշի ժամանակ Գէնուայի դուքսը կենաց առաջարկեց ի պատիւ Լուբէի. դուքսը իր բաժակը խփեց Լուբէի բաժակին, երկար սեղմելով նրա ձեռքը։ Նախաճաշից յետոյ Լուբէ, դուքսի հրաւէրով, նայեց «Լէպանտօ» նաւը. դուքսը խօսում էր այդ ժամանակ այն զարգացման մասին, որ տալիս են բոլոր երկիրները իրանց զինուորութեանը ծովի եւ ցամաքի վրա եւ զէնքի ժամանակակից կատարելագործութեան մասին։ Լուբէ խօսում էր այն բանի մասին, թէ ինչ սարսափելի պատասխանատուութիւն է դրված նրա վրա, ով պատերազմ է առաջացնում։ Գէնուայի դուքսը պատասխանեց, որ այժմեանի նման տեսակցութիւնները ընդունակ են ազգերի փոխադարձ յարաբերութիւնները աւելի սրտագին դարձնել։ Լուբէի հեռանալու ժամանակ Գէնուայի դուքսը ճանապարհ գցեց նրան մինչեւ սանդուղքի ծայրը եւ երկար ու ջերմ կերպով սեղմում էր նրա ձեռքերը։ «Լէպանտօ» նաւը շրջապատված էր բազմաթիւ մակոյկներով, որոնք լի էին հետաքրքիր հանդիսականներով, եւ որոնք թաշկինակները եւ գլխարկները թափ էին տալիս եւ բացագանչութիւններ էին արձակում ի պատիւ Լուբէի, հանրապետութեան, Ֆրանսիայի եւ Իտալիայի։ Կէսօրից յետոյ Լուբէ մնաղում էր ստորջրայ նաւեր եւ ստորջրեայ զբօսանք կատարեց։ Նախագահն ապա այցելեց այստեղ կառուցվող ռուսական նաւեր, պատանչաններ տուեց այդ նաւերի հրամանատարներին եւ ապա գնաց քաղաքի կողմից տրվող բանկէտը։ Պատասխանելով այնտեղ մէրի կենացին, Լուբէ ասեց, որ ամեն ջանք գործ կը դնի՝ միութիւն ստեղծելու քաղաքացիների մէջ՝ ժողովրդի բոլոր ոյժերը գործադրելու նպատակով՝ Ֆրանսիայի արտաքին պրէստիժը եւ բարօրութիւնը բարձրացնելու համար։

ՏՈՒԼՕՆ։ Ահա այն այցելութեան մանրամասնութիւնները, որ նախագահը արեց Սէյնում չինվող ռուսական նաւերին։ «Ցեսարեվիչ» նաւի սանդուղքի ներքեւում նախագահին հանդիպեց «Բայեանի» հրամանատար Բօդիսնօվ։ «Ֆրանսիական արդիւնագործութիւնը,—ասաց Բօդիսնօվ,—իր ճարտարութեան չնորհիւ տուեց Ռուսաստանին նոր կորով եւ ոյժի թանգագին աղբիւր։ Մենք միշտ կը յիշենք մեր նաւերի կառուցման տեղը եւ հպարտութեամբ կը հանդիպենք ծովերում մեր բարեկամ եւ դաշնակից ազգի նաւերը եւ կողջունենք ֆրանսիական դրօշակը»։ Լուբէ, ի պատասխան, ուրախութիւն յայտնեց այն առիթով, որ Ռուսաստանը Ֆրանսիային է դիմել այդքան կարեւոր նաւեր չինել տալու համար։ Այնուհետեւ նախագահը բարձրացաւ սանդուխքի վրա եւ նրա վերեւում նրան հանդիպեց «Ցեսարեվիչի» հրամանատար Գրիգորովիչ։ Լուբէ ազմեց օֆիցէրներից իւրաքանչիւրի ձեռքը եւ պտոյտ գործեց նաւի մէջ։ Գնալուց առաջ նա յանձնեց Պատուաւոր լեգէօնի կօմանդօրական խաչ «Բայեանի» հրամանատար Բօդիսնօվին եւ օֆիցէրական խաչ «Բայեանի» հրամանատարի օգնական 2-րդ կարգի կապիտան Սեմենօվին. երեկոյեան Գրիգորովիչին էլ կը չնորհվի Պատուաւոր լեգէօնի կօմանդօրական խաչ։

ՏՈՒԼՕՆ։ Գէնուայի դուքսը ներկայ էր քաղաքի կողմից տրված բանկէտին։ Մէրը կենաց բաժակ առաջարկելով՝ ողջունեց ռուսաց դրօշակը, «որ 1893 թուի անմոռանալի հոկտեմբերից յետոյ մենք,—ասաց նա—միացնում ենք մեր բոլոր ցոյցերին։ Տուլօնը չի մոռանայ այն յիշատակելի ժամանակը, երբ ծովապետ Ավելան եկաւ այստեղ իր բարձր միսսիայով»։ Լուբէին ջերմ կերպով ողջունեցին Գէնուայի դուքսը եւ իտալական, ռուսաց ու սպանիական օֆիցէրները։

ՏՈՒԼՕՆ։ Սրտագին հրաժեշտ տալով Գէնուայի դուքսին, Լուբէ երեկոյեան ճանապարհ ընկաւ ուղեկցված հատակրական տաղաղկներով։

ԿԱՐՆԱՐՎՕՆ։ Կապի գաղութի ապատամբ զօրաբաժնից փախած մի մարդ, որ բանակ է դրել Կակամասում, հաղորդում է, որ մի ժամանակ Կապչտադից՝ գերութիւնից փախած Ֆրոնէվարի հրամանատարութեան տակ գտնվող մի բօէրական զօրաբաժին եկաւ այժմ Կակամա։ Զօրաբաժինը բաղկացած է 200 հոգուց։

Կ. ՊՕԼԻՍ։ Ցունական պատրիարքարանում ճգնաժամ ծագեց չնորհիւ այն հանգամանքի, որ սինօդը եւ պատրիարքարանի խառն խորհրդարանը դժգոհ են Կոնստանտին V պատրիարքի վարչութիւնից։ Սինօդի եւ խառն խորհրդարանի այժմեան մեծամասնութիւնը, որ բաղկացած է նախկին պատրիարք Յովակիմ III-ի կուսակիցներից, մեղադրում է Կոնստանդին պատրիարքին այն բանում, որ նա պատրիարքարանի գործերը վարելիս անաջողութիւնների է հանդիպել։ Բարձրագոյն Դրան մօտ։ Երէկ սինօդի եւ խառն խորհրդարանի նիստում մեծամասնութիւնը երեք անգամ առաջարկեց պատրիարքին հրաժարվել պաշտօնից։ Պատրիարքը մերժեց այդ առաջարկը։ Մեծամասնութիւնը դրանից յետոյ արձանագրութիւն կազմեց, որի մէջ պահանջում է հրաժարեցնել պատրիարքին։ Երէկ արձանագրութիւնը ներկայացվեց Բ. Դրան հաստատութեան։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)

ամեն օր, բացի կիրակի օրերից։

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. Նաւասարդեան—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզասեռ. հիւանդ.
Կ. Մ. Զիկօվանի—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.
Կ. Ի. Դզելիեվ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի հ.
Զ. Ի. Բաբանասեանց—11—12 ժ. կանանց և երեխայոց հիւանդ.
Ա. Գ. Կարապետեանց—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Ն. Ն. Ռոսսոմբէկով—5—6 ժ. վիրաբուժութեան և մորթու հ.
Ա. Ն. Շպակովսկի—6—7 ժ. նեարդային (էլեկտրաբուժութիւն), և վեներ. հ.
Գ. Ա. Թարխանով—7—8 ժ. ներքին և երեխայոց հ.
Բ. Ա. Նաւասարդեան—7½—8 ժ.

Վճար 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Օ. Ս. Առվանիտեանի—տանը. ծաղկահատ և բժշկական մարմնամարզ. դիմել 11—1 ժ.։

Հիանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ

Պետերբուրգի բժշկական վարչութեան թոյլատրութեամբ։ Մեծ արկղիկը 5 բուբլի, փոքրը—3 բ. եւ 1 բ. 50 կ.։

ՍԻՖԼԻՍԻՆ

ՆՈՐ ՄԻՋՈՑ

ժամերը բուսցնելու և ամրացնելու համար, ոչնչացնում է թեփը։ Դուրս է եկել նաև բոլորովին նոր միջոց

ԶՈՒԻԿԱԹԸ

երեսին քնքշութիւն և ապիտակութիւն տալու համար, ոչնչացնում է արեւի պատճառած սեւութիւնը, մունները, տալիս է կայտուն քնքշութիւն և ապիտակութիւն։ Այդ գնները չափաւոր են. մեծ սրուակը, արկղիկի մէջ, 2 բուբլի, փոքրը—1 բ. 50 կ. Ծախվում են բոլոր պարֆիւմերական և դեղավաճառական խանութներում։ Գլխաւոր պահեստը գտնվում է Պետերբուրգում, Ռուչիինսկայա փողոց տ. № 15, բնակարան № 12. պահեստի բաժանմունքները գտնվում են. Թիֆլիսում կովկասեան դեղատան ապրանքների վաճառման ընկերութեան խանութում՝ Սրճանեան հրապարակ և նրա բաժանմունքում, Միքայէլեան փողոց և Բազում. նաև Միքայէլեան կամուրջի վրա, Պապովի և Արիստակովի դեղատներում։ Օտարաքաղաքացիների պատուէրները կատարվում են անմիջապէս՝ պօստով։

90—100

Այն անձինք, որոնք կը կամենան իրանց լուման նուիրել Թիֆլիսում ուսումնարան—ապաստարան հիմնելու թշուառ խուլուհամրերի համար, կարող են ուղարկել իրանց նուէրները Թիֆլիսի փոխադարձ կրէդիտի ընկերութեան (Երեւանեան հրապարակի վրայ), ուր բացված է ընթացիկ հաշիւ ուսումնարան—ապաստարանի համար (№ 735)։ 1—3

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՑՈՒՀԵԱՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

խնդրում է մեծապատիւ անդամներին, կիրակի, ապրիլի 8-ին, առաւօտեան ժամը 11-ին չնորհ բերել ընկերութեան տարեկան ընդհանուր ժողովին, որ տեղի է ունենալու ընկերութեան Կար ու Զեւի արհեստանոցում, Գանօվսկայա, № 25։

Նոյն արհեստանոցում ապրիլի 8-ին, առաւօտեան ժամը 10-ին, տեղի կունենայ արհեստանոց յաճախող խեղճ օրիորդների ձեռագործների վաճառումը։ 1—1

Հինգշաբթի, ապրիլի 5-ին

Թիֆլիսի դումայի դահլիճում տեղի կունենայ

ԱՐԵՒԵԼԱԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ Թիֆլիսի բաժանմունքի

Ընդհանուր ժողովը, որի պարապմունքը կը լինի. 1) ընտրել վարչութեան նախագահ, քարտուղար, գանձապահ եւ անդամներ, 2) սահմանել տօկոսը պահեստի դումար կազմելու համար, 3) կազմել յատուկ արեւելագիտութեան գրադարան եւ 4) ընտրել ընկերութեան անդամներ։

Սկիզբն է 9 ժամին երեկոյեան։ 1—2

Եկատերինօդար քաղաքում

Կրասնայա եւ Կիրպիչնայա փողոցների անկիւնում, եղբ. Տարասօվների առեւտրական տան մօտ, ծախվում է անկիւնի պլանաւոր տեղ, խանութներով, որոնք իւրաքանչիւր տարի 4410 բուբլի վարձ են բերում. տարածութիւնն է 19 սաժէն, կրասնայա փողոցի վրա, կամ տրվում է վարձով երկար ժամանակաժիջոցով։ Գնի մասին տեղեկանալ տիրոջից—Կրիչտոֆովիչից—Պոլտավա քաղաքում, տուն Կատրանովի։ 1—2

Թիֆլիսի Քաղաքային Կրեդիտային Ընկերութեան Վարչութիւնը

տրանով յայտնում է ընկերութեան Անդամներին, որ կանոնադրութեան § 71-ի մէջ յիշված եռամսեայ արտօնութիւնը պայմանաժամային վճարները տալու համար լրանում է այս տարվայ ապրիլի 1-ին եւ որ նոր մինչեւ այս տարվայ ապրիլի 8-ը չը վճարվեն բոլոր ապառիկները, անկանոն վճարողների կայքերը, կանոնադրութեան § 72 հիման վրա, կը յայտարարվեն հրապարակապէս ծախելու։

Բացի այդ Ընկերութեան Վարչութիւնը յայտնում է պ.պ. Անդամ-փոխառուներին, որ աճուրդը այս կիսամեակին կը նշանակվի ոչ ուշ քան յունիսի 18-ը։ 1—1

ԹԻՖԼԻՍԻ ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ

վաճառվում են հետեւեալ նոր լոյս տեսած գրքերը՝

Արծրունի բժ. Վ. Մի խմբ—գ. 5 կ.։
Աբովեան Խաչատուր, Երկերի (Վէրք Հայաստանի եւ այլն) ժողովածու, հեղինակի լուսանկարով. Մոսկվա, 1 բ. կազմով՝ 1 բ. 40 կ. եւ 1 բ. 75 կ.։
Հայկունի Ս., Պապաւոր Լուսիկ եւ Սեստեւ Հովիկ, Վաղարշապատ 1900 թ. 25 կ.։
Ցարութիւնեան Իս., Իմ օրագիրը, Թիֆլ. 1901 թ. 25 կ.։
» Նոր-Նախիջեւանի ս. Խաչ վանքը, Թիֆլ. 1901 թ. 40 կ.։
Շահ-Նազարեանց Ս. բժ., Մարդասիրութեան եւ աշխատանքի ազնիւ զինուորը՝ Իւրիյ Ալէքսէեւիչ Վեսելովսկիյ, Մոսկ. 1901 թ. 60 կ.։
Պատկանեան Ռափայէլ, Ընտիր երկասիրութիւնները, երկու հատորով, Ս. Պետբ. 4 բ. կազմով 4 բ. 60 կ. եւ 5 բ.։
Տէր-Սատրեան, Գեղարուեստական ալբոմ հայ գործիչների, 32 պատկեր. Թիֆլ. 3 բ.։
Թառայեանց Ս. Հայ ժողովրդի արհեստագործութիւնը, Թիֆլ. 1898 թ. գ. 40 կ.։
» Ընտանիքի կեանքը, Բագու, 1899 թ. գ. 20 կ.։
» Գեօտէ (պատկերով), Թիֆլ, 1900 թ. գ. 30 կ.։

Դիմել՝ Въ Тифлисъ, Центральную Книжную Торговлю.

Թիֆլիսի Հայոց Բարեգործական Ընկերութիւնը

պատիւ ունի յայտնելու ընկերութեան պ.պ. անդամներին, որ ներկայ տարվայ ապրիլի 5-ին, երեկոյեան 8 ժամին, քաղաքային դումայի դահլիճում, լինելու է ընդհանուր ժողով՝ քննելու համար հետեւեալ հարցերը.

1) 1900 թ-ի հաշիւի զեկուցումը. 2) 1901 թ-ի նախահաշիւի հաստատութիւնը եւ 3) Վարչութեան երեք անդամի ընտրութիւնը։

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET C-ie

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր եւ ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԷԼԻՑ ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկու շաբաթը մի անգամ։

Եւ հակառակը՝ Բաթումից Մարսէլ, մանելով Տրապիզոն, Սամսոն եւ Պոլիս։ Մեկնում է Բաթումից ուրբաթ, մարտի 30-ին (ապրիլի 12)—շոգենաւ՝ ՄԻՆԳՐԵԼԻ, կապիտան ՇԻԼԹ։ Եւ այսպէս շարունակաբար, երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը 4-ին ճաշից յետոյ։

Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ տրվում են տեղերականից պակաս գներով։

Ամիսը մի անգամ կանոնաւոր հաղորդակցութիւն Բաթումի և Սալոնիկի մէջ, ընդունելով ապրանքներ բոլոր հիւսիսային նաւահանգիստների համար։

Ապրանքների եւ ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւններ ստանալու համար թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակատարներին՝

ԲԱԹՈՒՄՈՒՄ—պ. Վիկտոր դ'Արնօվն, Նաբէրէժնայա։ ԹԻՖԼԻՍՈՒՄ—պ. Ս. Դ. Բարեկենդանեանին, Սիոնի փող. Խօջափարուխօվի եւ Մայսուրաձէի քարվանսարա։ ԲԱԿՈՒ—եղբ. Վ. եւ Ի. Մութաֆեաններին, Նաբէրէժնայա փողոց, տուն Կրասիլնիկովի № 27։ ՆՈՎՈՐՕՍԻԲՍԿ—Վլադիկաւկազի երկաթուղու առեւտրական գործակալութիւն։ 4—20

Р. К. и К°

ФАБРИЧНО-ТОРГОВОЕ ТОВАРИЩЕСТВО

Р. КЁЛЕРЪ и К°

ЗАЯВЛЕН. ДЕП. КЛЕЙМО ТОРГ. и МАНУФ.

ВЪ МОСКВѢ, ИЛЬИНКА, СРЕДНІЕ ТОРГ. РЯДЫ.

Р. КЁЛЕРЪ ОТДѢЛЕНІЯ:
ВЪ С.ПЕТЕРБУРГѢ, САРАТОВѢ, ВЛАДИВОСТОКѢ И НИЖЕГОРОДСКОЙ ЯРМАРКѢ.

Прованское Масло,
ИЗВѢСТНОЕ КЁЛЕРСКОЕ,
приготовленное въ Ниццѣ по особому указанію.
Масло это прессуется только изъ свѣже-собранныхъ,
ПРЯМО СЪ ДЕРЕВА,
вполнѣ спѣлыхъ и отборныхъ оливокъ.

КЁЛЕРСКАЯ УКСУСНАЯ ЭССЕНЦІЯ.
Благодаря извѣстной доброкачественности КЁЛЕРСКОЙ УКСУСНОЙ ЭССЕНЦІИ и несомнѣннымъ преимуществамъ ея предъ всѣми другими, сбытъ ея, постепенно прогрессируя, достигъ въ истекшемъ году цифры БОЛѢЕ ЧѢМЪ 1½ МИЛЛІОНА ФЛАКОНОВЪ.
Дешевыя цѣны однако предлагаются и многими подражателями, но необходимо знать, что онѣ имѣютъ своимъ основаніемъ не громадный сбытъ и естественную при этомъ возможность удешевленія товара, а лишь вынужденное стремленіемъ къ конкурренціи разбавленіе водой и меньшую раффинировку (утонченіе вкуса) эссенціи.

КЛЮКВЕННЫЙ экстрактъ
фабрики Т-ва Р. КЁЛЕРЪ и К°
ДАЕТЪ ВПОЛНѢ ПРОЗРАЧНЫЙ ПРЕЛЕСТНАГО ЦВѢТА И ВКУСА НАПИТОКЪ.

=ПЕРЕЦЪ=
ЧЕРНЫЙ и БѢЛЫЙ
молотый, въ жестянкахъ съ просѣвающей крышкой, отъ 1/32 до 1ф. а также въ изящныхъ граненыхъ флакон. для стола.
Подмѣси къ молотому перцу—такое обычное явленіе и настолько перешли границы, что готовый молотый перецъ часто продается гораздо дешевле немолотаго цѣльнаго. Ярлыкъ же Т-ва Р. КЁЛЕРЪ и К°, какъ извѣстно всѣмъ, служитъ ВѢРНЫМЪ РУЧАТЕЛЬСТВОМЪ ВЪ НЕПОДДѢЛЬНОСТИ ТОВАРА.

СТОЛОВАЯ СОЛЬ,
ХИМИЧЕСКИ ЧИСТАЯ
ВЫСШЕЙ РАФФИНИРОВКИ,
ФАБРИКИ Т-ВА Р. КЁЛЕРЪ и К°.
Эта соль не гигроскопична и поэтому въ солонкѣ не волгнетъ и не образуетъ комковъ.

КЁЛЕРСКАЯ ДУШИСТАЯ СТОЛОВАЯ ГОРЧИЦА
въ порошкѣ, вполнѣ готовая для МГНОВЕННАГО приготовленія изъ нея горчицы; превосходитъ всѣ подобныя произведенія по тонкости вкуса, аромату и дешевизнѣ.
NB. Рекомендуется также и обыкновенная крѣпкая сухая горчица для стола.

ВЫСШАЯ НАГРАДА GRAND PRIX НА ПАРИЖСКОЙ ВЫСТАВКѢ 1900 г.

ВЪ ПРОДАЖѢ ВЕЗДѢ у ВСѢХЪ БОЛѢЕ ИЗВѢСТНЫХЪ ТОРГОВЦЕВЪ.

Дозволено цензурою, Тифлисъ, 30 Марта 1901 г.

Типографія Грузинск. Т—ва, Большая-Ванкская ул., № 27